

31-32(670-671)

14.11.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուբին եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏՐԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ՔԱՐԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ձեռնադրությունը եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է: Եկեղեցին ոչ միայն քարե շինությունն է, որտեղ հավաքվում և աղոթում են, այլ նաև հավատացյալների կազմակերպված համայնքն է: Այն կազմված է մկրտված անձանցից, որոնց միավորում են միեւնույն հավատքը,

միջոցով, այլ այն փոխանցվում է Ձեռնադրության Սուրբ Խորհրդի միջոցով:

Ձեռնադրությունը եկեղեցու կարևորագույն խորհուրդներից է: Ձեռնադրության միջոցով անձը ստանում է եկեղեցու սպասավորի սրբազան պարտականությունները



Ս. Հաղորդությունը, Սուրբ Խորհուրդները՝ գտնվելով նույն հոգեւոր իշխանության ներքո: Հոգեւոր այս իշխանությունն իրականացնողները եկեղեցու հոգեւորականներն են, որոնք ծառայում են Աստծուն, ուսուցանում ու օրհնում են հավատացյալներին եւ առաջնորդում եկեղեցին: Ծառայելու, ուսուցանելու, օրհնելու եւ առաջնորդելու այս իշխանությունը չի տրվում ընտրության կամ նշանակման

կատարելու իշխանությունն ու շնորհը: Ձեռնադրությունը խորհուրդ է, որի միջոցով ընծայացուին իրավունք է տրվում կատարել խորհուրդներն ու սնել Քրիստոսի հոտը: Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է եպիսկոպոսի կողմից: Եկեղեցուն կան հոգեւորականների տարբեր աստիճաններ, հետեւաբար կան նաեւ տարբեր արարողություններ, որոնցով տրվում է այս աստիճաններից յուրաքանչյու-

րը: Ինչևէ, այդ բոլոր արարողություններն ունեն ընդհանրություն. եպիսկոպոսը ձեռքը դնում է կրոնական աստիճան, կարգ կամ իշխանություն ստացողի գլխին: Իր օծյալ աջը ընծայացուի գլխին դնելով՝ շարունակվում է Առաքելական իշխանության հաջորդականությունը, որը նախապես առաքյալներից տրվել էր եկեղեցու եպիսկոպոսներին եւ մինչ օրս մեզ է հասել ձեռնադրության միջոցով:

2022թ. նոյեմբերի 13-ին Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցուն հընթացս Սուրբ պատարագի, օրհնությամբ Ն.Ս.Օ.Օ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, կատարվեց քահանայական ձեռնադրության խորհուրդ: Արցախի թեմի ՔԴԵԿ տնօրեն Գոռ սարկավազ Գյուրջյանն արժանացավ քահանայական օծման և, ի պատիվ Արցախի եկեղեցանկեր և ազգանկեր Վաչագան Բարեպաշտ թագավորի, ստացավ տեր Վաչագան քահանայական անունը: Հավարտ պատարագի ներկա հավատացյալները շնորհավորեցին նորած թախանային և ստացան նրա մյուռոնաբարյուր աջից բաշխվող օրհնությունները:

Նորած Տեր Հայրը, կիսվելով իր տպավորությամբ, ասաց. «Ձեռնադրության ժամանակ ինձ տրվեց Վաչագան անունը՝ հայտնի Վաչագան Բարեպաշտի անունով, որը եղել է Արցախի թագավորը, և որի օրոք Արցախը իր հզորության գագաթնակետին է հասել: Այդ կերպարը այսուհետ ինձ էլ է ուղեկցելու ամբողջ կյանքում, զինվորներին էլ կպատգամեմ, որ ապրեն Վաչագան բարեպաշտի կյանքի ուղով»:



հզոր ձեռքով առատապես հեղի իր վրա Սուրբ Հոգու շնորհները, բազմապատկի իմաստությունն ու կորովը, որ կարողանա միշտ Տիրոջ ճշմարիտ ճանապարհների վրա հովվել իրեն վստահված հոգևոր հոտը:

Արթուր կարկ ԱԲՐԱՎԱՍԵԱՆ
Արցախի թեմի ՔԴԵԿ
փոխտնօրեն

ՐԱՂԹԱՆԱԿ ԿԵՐՏՈՂ ԱՐՑԱՒՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ



Նոյեմբերի 4-5-ը Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում անցկացվել է Կիոկուշին կարատեի KWF Եվրոպայի 35-րդ առաջնությունը, որտեղ Հայաստանի ներկայացուցիչները՝ Սպարտակ Գասպարյանի գլխավորությամբ, 19 մասնակցով 17 մեդալ են նվաճել: Հատկանշական է, որ հավաքականի 19 մարզիկներից 13-ը Արցախից են:

տեխնիկա» մրցանակը: «Մինչև մեծամարտը շատ լարված ես լինում, պատասխանատվություն ես զգում նորից հաղթելու եւ տիտղոսը պահելու համար: Ինձ համար տպավորիչ էին աշակերտներիս հաղթանակները, քանի որ իմ ելույթից մեկ օր առաջ պատանիների առաջնությունն էր, որտեղ բավական լուրջ արդյունքներ ունեցանք: Այդ օրվա վառ հույզերն ինձ ուժ ու եռանդ տվեցին, որ հաջորդ օրն արդեն ինքս պայքարեմ հերթական չենսպիոնության համար», - պատմել է Եվրոպայի վեցակի չենսպիոնը:

Առուշանյանի խոսքով՝ ելնելով աշխարհաքաղաքական իրավիճակից, ինչպես նաեւ Հայաստանում եւ Արցախում տիրող վիճակից՝ չեն կարողացել շատ մրցումների մասնակցել. հայտերը ներկայացրել են, բայց չեն կարողացել ներկա գտնվել: Նա հավելել է, որ սա 2022 թվականի նախավերջին մրցաշարն էր, նոյեմբերի վերջին նաեւ Հայաստանի առաջնությունը կանցկացվի, բայց Եվրոպայի առաջնությունում զրանցված արդյունքն այս տարվա ամենամեծ նվաճումն է, եւ կարելի է ասել, որ տարին շատ լավ են եզրափակում:



տուններ, մարզիկներ ու մեր մարզասեր հանրությունը: Մեր մարզիկներից հինգը գրառեցրել են 1-ին, հինգը՝ 2-րդ, իսկ երկուսը՝ 3-րդ մրցանակային տեղեր:



Կիոկուշին կարատեի ֆեդերացիայի համահիմնադիր եւ մարզիչ Արմեն Պետրոսյանն ամփոփեց՝ ասելով, որ Եվրոպայի առաջնությունում Հայաստանի հավաքականը թիմային առաջնությամբ գրառեցրել է 3-րդ տեղը, ինչն աննախադեպ է: Նա ավելացրեց, որ նոյեմբերի 9-ը մեր պատմության մեջ մտավ որպես պարտության օր, իսկ նոյեմբերի 10-ը թող դառնա նոր հաղթանակներ կերտելու և հաղթողներին դիմավորելու և մեծարելու օր:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՄՓՅՈՒՌՔԻ ԸՆԵ ՊԵՏՔ Է ՃԻՇՏ ՈՒ ԳՐԱԳԵՏ ԱՃԽԱՏԱՆՔ ՏԱՐԿԻ

Օրերս աշխատանքային այցով Գերմանիայում էր ԱԶ նախագահի խորհրդական Լուսինե ՂԱՐԱՆՆՅԱՆԸ: Ներկայացնում ենք մեր գրույցը նրա հետ:

- Տիկին Ղարախանյան, ի՞նչ նպատակ էր հետապնդում Ձեր այցը:

- Հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 3-ը ՀԱԵ Գերմանիայի հայոց առաջնորդարանի, մասնավորապես՝ եպիսկոպոս Սերոբե Իսախանյանի հրավերով գտնվում էի Գերմանիայում բանախոսելու նպատակով: Ինձ հետ էր նաև ԱԶ նախագահի խորհրդական Ազատուհի Սիմոնյանը, որը շարունակել է իր շրջագայությունը նաև Ֆրանկֆուրտ քաղաքում: Այցելել ենք տեղի եկեղեցական և ոչ եկեղեցական համայնքներ: Գերմանիայում կա պաշտոնապես գրանցված 16 հայկական համայնք:

- Այսինքն՝ հայեր ունեցող ո՞չ բոլոր բնակավայրերում կան հայկական համայնքներ:

- Այո, Գերմանիայում կան շատ բնակավայրեր, որտեղ հայեր կան, բայց պաշտոնապես գրանցված չեն որպես համայնքներ: Օրինակ՝ Ռոստոկը, որտեղ շատ հայեր են ապրում, բայց համայնք չի ձևավորվել:

- Իսկ ի՞նչ է պետք դրա համար:

- Համայնքը մոբիլիզացնող և ուղղորդող, համակարգող ուժ է հարկավոր, աշխատանք պետք է կատարել, նաև՝ ֆինանսական միջոցներ:

- Փաստորեն այդ բնակավայրերում ապրող հայերն ինքնուրույն կամաց-կամաց հեռանում են:

- Արդեն մարզինալացվում են: Ես կասեի՝ Սփյուռքի հետ 30 տարի աշխատանք չի կատարվել Հայաստանում ու Արցախում: Այդ աշխատանքներում պետք է առանցքային լինեի ուղղորդող գաղափարական կողմը, մասնավորապես Սփյուռքի՝ որպես էքոնոմիկապես կառույցի, հայապահպան դերի ձևավորումը:

- Ձեր առաջին տպավորությունը դա՞ էր:

- Սփյուռքի հետ տարիներ շարունակ շփում է ստեղծվել միայն դրամահավաքների ժամանակ, ինչը շատ վիրավորական է: Մինչդեռ աշխատանք պետք է տարվեր փոխհամաձայնեցված, համակարգված, կոնկրետ հայեցակարգերով: Մենք սփյուռքը ուզում ենք տեսնել հավաքական և ինչ-որ աջակցություն ակնկալել նրանից: Իրականում հավաքական վարքագիծ, նկատի ունեն բարոյապես և նյութապես աջակցող, պետք է դրսևորենք նաև մենք: Յուրաքանչյուր աշխատանք լիակատար է, հասնում է իր վերջնական պատակին, եթե կա հետադարձ կապ: ՀԱԵ-ն է, որ կարողանում է հայկական համայնքներն այս կամ այն չափով հեռու պահել հիբրիդային երևույթներից, նպաստել հայկականության պահպանմանը: Որտեղ եկեղեցի չկա, մարզինալացման և ասիմիլացման վտանգն առկա է: Եվ հենց այդտեղ գրանցված համայնք չունենք: Իհարկե, 44-օրյա պատերազմի ժամանակ եղավ սփյուռքի մոբիլիզացիա, և Գերմանիայի հայ համայնքը մեծ ներդրում ունեցավ: Այդ նույն համայնքը 44-օրյայից հետո մոտ 60 հազար եվրոյի աջակցություն է ցուցաբերել Արցախին, հիմնականում՝ կրթամշակութային համակարգին, վերականգնողական կենտրոնին, Շուշիի 4 գյուղերին: Հիմա դժվարությամբ է գումար հավաքվում. Արցախի ներկայիս կարգավիճակը և այս անորոշությունը խանգարում են: Մարդկանց մոտ աղճատված է հավատի և վստահության զգացումը: Բայց չնայած համայնքը հարուստ չէ, որոշել է ջրատարացուցիչների՝ մեր ներկայացրած ծրագրին օժանդակել, աջակցություն կլինի նաև «Երկարօրյա դպրոց» և «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ստեղծման ծրագրերին, Մարտունու արհեստագործական ուսումնարանի վերանորոգված լսարանների կառուցմանը: IT և

էլեկտրաէներգետիկայի ոլորտի երկու երիտասարդ առջանց կապով կղասախոսեն ԱրՊՀ և «Եզնիկ Մոզայան» ուսումնարանի ուսանողների համար:

- Ո՞ր համայնքներում եք եղել և ի՞նչ բնաներով եք բանախոսել:

- Հանդիպումներն սկսել ենք Շտուտգարդի համայնքից, ապա մեկնել ենք Քյոլն, Հանաու, Բրեմեն, Մյունխեն, վերջին կանգառը եղել է Բեռլինը: Ազատուհի Սիմոնյանը եղել է նաև Ֆրանկֆուրտում: Հանդիպումներ ենք ունեցել համայնքային կենտրոններում, որտեղ սովորաբար ինչ-որ միջոցառումների նպատակով հայե-

զարմանաք, Կենտրոնական խորհրդի ատենապետը ազգությամբ գերմանացի Ջոնաթան Շպանենբերգն է: Նրա համակրանքը հայերի նկատմամբ մանկությունից է: Ծնողները դասավանդել են Լիբանանում՝ հայկական դպրոցում, և նա մեծացել է հայկական միջավայրում: Ատենապետը մեծ աշխատանքներ է տանում Բունդեսբադի հետ: Արցախին ոչ միայն ֆինանսապես աջակցող, այլև քաղաքական առումով որոշ ուղերձներ ենք Շպանենբերգն է տանում Բունդեսբադ: Ծրագրեր ենք իրականացնելու ոչ միայն Արցախի հարցը Բունդեսբադում խորքային ներկայացնելու, այլև մեր կրթական համա-

լայ ոչնչացման մասին» հռչակագիրը, չի պահպանվում 1972թ. ընդունված «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» Կոնվենցիան, չի գործում 1970թ. ընդունված «Մշակութային արժեքների պաշտպանության մասին» արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի անօրինական փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին» Կոնվենցիան, որով ՅՈՒՆԵՍԿՕ-ն պետք է հետամուտ լինի թանգարանների ցուցանմուշների վերահսկողությանը: 2020թ. նոյեմբերի 29-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի գծով տնօրեն Օրդե Ազուլեն հան-



դես էր եկել հայտարարությամբ, որով պատրաստակամություն էր հայտնել էթնիկական աջակցություն և առաքելություն ուղարկել Արցախ՝ պատմամշակութային և կրոնական ժառանգությանը ծանոթանալու և պահպանելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր նախաձեռնելու նպատակով, բայց մինչ այսօր Արդեջանը համաձայնություն չի տվել, և արքայազնային դիտարկումներով ու այլ կազմակերպություններով ենք մենք տեսնում, թե ինչ է իրականում կատարվում գրավյալ տարածքներում Արցախի պատմամշակութային ժառանգությունը պետք է պահպանվի: Գերմանիայի նախկին պատգամավորների հետ ես հիմնականում խոսել եմ մեր պատմամշակութային ժառանգության քաղաքակրթական արժեքի մասին: Ազգային քարանձավը, Տիգրանակերտը՝ որպես նախաքրիստոնեական շրջանի պատմամշակութային հուշարձան, Միրիկի դամբարանադաշտը և այլ հուշարձաններ, որոնք քստ էութայն միայն հայկական ժառանգություն չեն, այլև՝ համաշխարհային քաղաքակրթական, և Եվրոպան պետք է շահագրգռված լինի դրանք պաշտպանելու գործում: Այդ արժեքները փրկելով ու պահպանելով՝ նաև քաղաքակրթական խնդիրներ ենք լուծում: Եվ եթե Եվրոպան շրջանցի, այդ ուղտը նրա դռանն էլ է չոքելու մի օր:

Մեր՝ Քյոլնում եղած ժամանակ գումարվել էր ՀԱԵ Գերմանիայի քե-



րը հավաքվում են: Ազատուհի Սիմոնյանը ներկայացրել է Արցախի մարդկային, նյութական կորուստները և շինարարական, ենթակառուցվածքների, գյուղատնտեսական այն ծրագրերը, որոնցով ուզում ենք Արցախը վերականգնել: Իսկ ես ներկայացրել եմ կրթամշակութային կյանքի պատկերը. ինչ կորուստներ ու հարվածներ է կրել, և ինչպես ենք տեսնում համակարգի զարգացումը: Եվ այս ամենը՝ տեսասահիկների միջոցով: Ներկայացրել են նաև Արդեջանի վարած ռասիստական քաղաքականությունը կրթական դաշտում, թե հայատյաց ինչ աշխատանքներ է տանում աճող սերնդի հետ, ինչպի-



սի պատմագիտական գեղծարարություն է սկսել, հատկապես պատմամշակութային ժառանգությունը, մեր եկեղեցիների աղվանականացման և բռնալուծման գործում: Ես նաև տվել եմ այդ ամենը հավաստող յուրօրյա հարդրողների հասցեները: Բանախոսությունս հայերենով էր, որն, ինչպես ասացի, ուղեկցվում էր տեսասահիկներով՝ գերմաներեն գրառումներով:

կարգին աջակցելու ուղղությամբ:

Մենք հանդիպել ենք Բունդեսբադի նախկին պատգամավորների, նաև՝ Գերմանիայում ՀՀ նախկին և ներկայիս դեսպանների հետ: Ես ընդգծել եմ Արցախի պատմամշակութային ժառանգության մոնիթորինգի համար անկախ փորձագիտական կառույցների ստեղծման ու նրանց խմբերի՝ Արցախ այցելության անհրաժեշտությունը:

Գերմանիայում կան անհատներ, որոնք Արցախի ինքնորոշման հարցը մանրամասն ուսումնասիրել են և գրքի տեսքով ներկայացրել: Օրինակ, Համբուրգի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր, Օտտո Լուխտենհարտը, որը գիրք է հրատարակել, որտեղ իրավական ասպեկտներով ներկայացնում է արցախցիների ինքնորոշման իրավունքը և պնդում, որ այս ժողովուրդը պետք է ինքնորոշման ճանապարհով փրկի իր երկիրը:

Հարցազրույց ենք տվել գերմանախոս հայկական «Քանթան» թերթին, որն այդ երկրի արտգործնախարարությունում էլ են ընթերցում, Եվրախորհրդարանում էլ: Ես ներկայացրել եմ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ որպես վերազային կազմակերպություն, որն ունի ՄԱԿ-ի գլխավոր մանդատը, ոչ միայն չեզոք, այլ նաև կողմնակալ դիրքորոշում ունի Արցախի պատմամշակութային ժառանգության նկատմամբ, և որպես գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության սկզբունքներ առաջադրող, չի անում իր գործը: Շրջանցում է 2003թ. ընդունած «Մշակութային ժառանգության դիտավոր-

մի տարեկան պատգամավորական ժողովը, որին ներկա ենք եղել: Այն տարեկան հաշվետվություն է, որտեղ ներկայացվում են համայնքներում կատարված աշխատանքները: Այնտեղ կային և՛ իրաքահայեր, և՛ պոլսահայեր: Ցավոք, Գերմանիայում կան պոլսահայեր, որոնց համար հայերեն խոսելը դժվարություն է:

Այդ վեց համայնքներում հասկացանք, որ հոգևոր հովիվներն են համակարգում ամբողջ աշխատանքը: Նրանք պատրաստ են աշխատել մեզ հետ, պարզապես նրանց հետ պետք է աշխատանք տարվի, միասնական հայրենիքի գաղափարը գեներացնել, երբեմն էլ ինչ-որ հարցով մենք աջակցենք: Բրեմենի համայնքի կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհին մոտեցավ ինձ, և ես խոստացա մեթոդական գրականությամբ օգնել: Կիրակնօրյա դպրոցների թիվն էլ շատ քիչ է, ոչ բոլոր համայնքներն ունեն, Բեռլինում, Մյունխենում կան: Կան նաև ազգային պարի, մարզական խմբակներ: Բայց ընդհանուր առմամբ Գերմանիայի հայկական համայնքը էթնիկապես գործել չէ: Ինչ կա, ՀԱԵ-ի և մասնավորապես Սերոբե եպիսկոպոս Իսախանյանի շնորհիվ է:

- Ամփոփելով Ձեր տպավորությունները:

- Ես երկու զգացողություն եմ ունեցել մեր հանդիպումների ժամանակ: Մի դեպքում զգացել էմ մեր հատվածական, թեկրոյային և հուզական լինելը, մյուս դեպքում Սփյուռքի՝ որպես մեր հավաքականության և միասնության պահպանման ներգործումն ազդեցությունը: Պարտադրաբար բան են ատում, բայց սփյուռքը, որպես անդրազգային հարց, ինքնուրույն ակտուալացման հզոր ռեսուրս ունի, պարզապես պետք է ճիշտ ու գրագետ աշխատանք տարվի:

ԳՆԱՐԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԻ

2002-2022ԹԹ. ԲԱՅԱՌԻԿ ԱՐԺԵՔՆԵՐԻ, ՄԱՅՈՒՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԵՐՏՄԱՆ 20 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԻՆԵՐԻ ԴԱՏԱՌԻԹՅՈՒՆ՝ ՄԵԿ ԲՈՎԱՆԴԱՎԱՅԻՆ ԲԱՅ ԷԶՈՒՄ



...ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՓՈՔՐԻԿ ՆԱԽԱՐԱՆ...

1988թ. փետրվարի 18-ին խնայարարի միջնակարգ դպրոցի տնօրեն Զավեն Բեգլարյանը 3-րդ դասաժամին կամազուկ թակեց պատմության կարճատև դուռը և դիմելով ԽՍՀՄ պատմություն պարապող երիտասարդ ուսուցչուհուն՝ տողերիս հեղինակին, ասաց, որ պետք է շտապ հավաքվեմ՝ Երևան մեկնելու, առաջին համախայստանյան հանրահավաքին մասնակցելու նպատակով: Արցախից հանրահավաքին մասնակցող պատվիրակներն էին՝ 12 հոգի: Ժամանեցինք մայրաքաղաք Երևան, մասնակցեցինք հանրահավաքին, և մեր ծայրը հնչեցրինք Ազատության ծովածավալ, հազարավոր մարդկանց բազմությանը լեցուն հրապարակում: Հետո արժի ճանապարհը, պարզվեց, շատ վտանգավոր էր Արդեշտանի տարածքով (Շարժման առաջին օրերն էին):

Փետրվարի 20-ին ընդունվել էր Արցախի՝ Մայր Հայրենիքին վերամիավորման հայտնի պատմական որոշումը: Փետրվարի 21-ի ուշ երեկոյան հասանք Մարտակերտ և ակամատեսն ու վկան դարձանք վայրագ ազերու ձեռագրի. հայերին պատկանող քարկոծված, ջարդված մեքենաներ, ծեծված հայեր:

Արցախյան արդար, ազնիվ ու խաղաղ Շարժմանը ազերի թուրքը պատասխանեց քարունահակով, պատահած հայի ծեծ ու ջարդով: Փետրվարի 22-ին՝ երկուշաբթի վաղ առավոտյան հասանք Ասկերան՝ բախտի բերմամբ չդառնալով վայրամբոխի Արդաձից-Ասկերան ձգվող բարբարոսական հարձակման գոհ (ազերի ամբողջ ճանապարհին վառեց անգամ հայերին պատկանող խաղողի այգիները, ալրաղացը)...

Սա մի փոքրիկ, բայց, երևի, եռթամբ բացառիկ դրվագում է Արցախյան շարժման ակունքում տողերիս հեղինակի մասնակցության մասին:

Իսկ մինչ այդ՝ Արցախյան շարժման գաղտնի փուլ, ժողովներին մասնակցություն, ելույթներ և այլ հնարավոր գործողության մեջ...

1993թ. նոյեմբերի 3-ից նա աշխատանքի անցավ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ. 2 դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

2000թ. ուսուցչուհին մասնակցեց Արցախում առաջին անգամ անցկացված «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, մեծ պատասխանատվությամբ, ջանադիր աշխատանքով հարթահարեց մրցույթի բոլոր շեմերը, իսկ 2002թ. մարտի 26-ին ստանձնեց մեծ ու կարող, նաև աշխատանքում խնդիրների պակաս չունեցող մանկավարժական մի հանրույթի ղեկավարման պատասխանատվությունը: Նրան շնորհավորանքի խոսքեր պետք էին, նա մտավ ծանր ու պատասխանատու լծի տակ և ամխոնց ու անտրտունց իր գործընկերների հետ սկսեց քաշել լուծող գերնպատակ դարձնելով խոնարհ, անմնացորդ ծառայությունը սերունդների ռազմահայրենասիրական, հայեցի դաստիարակությունը՝ ամեն օրը դարձնելով ստեղծելու և ստեղծագործության, նոր մտքերի, մտահղացումների, գաղափարների իրականացման օր, բացառիկ մտահղացումների իրականացման տարիների պատմության ակունք...

...Եվ դրանց շարքերը շատ են ու սովոր. ա/ Դեռևս մինչև հանրակրթության, մանկավարժության անձնակազմի գործունեության, յուրաքանչյուրի պարտականությունների մասին պաշտոնական տեղեկագրերի հանդես գալը նրա մտքի թելադրանքով ու շարադրանքով ստեղծվեցին ուսուցիչների, դասուղեների,

աշակերտական ակտիվների, աշխատող ողջ անձնակազմի պաշտոնական պարտականությունների մասին տեղեկագիր-հուշաթերթերը, հայրենագիտական, պետականության, «Սիրենք, պաշտենք, երկիրը մեր» խորագրով անկյուններն ու վահանակները դպրոցի բոլոր ուսումնական կարիքներում ու դասասեսնակներում:

բ/ Գործունեության գերնպատակ դարձնելով սովորողի ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ առաջինը նա դարձավ դպրոց-բանակ կապի, համագործակցության համահեղինակներից հանրապետությունում, դպրոցի շուրջ 1000 աշակերտների և ծնողների մեծ խանդավառությամբ տարիներ շարունակ կազմակերպեց ծանրոցների հավաքումն ու առաքումը դիրքերում կանգնած տղաներին, զինվորներին: Դպրոցն ինքը դարձավ հանգանակության և առաքման կենտրոն-ուսանելի օրինակը, ավանդույթը, ձեռնարկումը դարձավ դարձան օրինակ նաև այլ ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների համար: Կարծում ենք, սա ևս բացառիկ մտահղացումների շարքին կարելի է դասել:

գ/ Ազգային հերոսներին, ազատամարտիկներին նվիրված միջոցառումների, արիության դասերի շարքը տարբեր մակարդակներով անսպասելի էր, երկար տարիներ գործում էր «Պատանի մտղեհակներ» խմբակը: Այդ, կարելի է թույլ տալ և համարձակորեն ասել՝ դպրոցի պատերն անգամ չչնչել և չնչուն են հայրենասիրությանը: Երկար ու ձիգ տարիներ շարունակ շուրջ 800-1000 աշակերտ ունեցող դպրոցն ամեն առավոտ իր սաներին, աշխատող անձնակազմին դիմավորում է ազգային-ազգայնական, հայրենասիրական երգերի ներքո, բարձր տրամադրությամբ, հայրենասիրական ոգով տոգորված աշակերտների շարայուններն առավոտանք մարմնամարզությունից, պետական օրհներգը և Արցախի հերոս Աշոտ Ղուլյանին (Բեկոր) նվիրված փառերգը հնչեցնելով՝ մտնում են դպրոցի շեմից և շարունակում կերտել հետաքրքիր ու բովանդակալից դպրոցական առօրյան...

...Ամեն օր... ամենօրյա աշխատանք, գործ, որ կայան, իրականություն էր դառնում պատասխանատուների քրտնաթոր, այդ, բառիս բուն իմաստով քրտնաթոր աշխատանքի միջոցով: Գուցե համաձայնվեմք ու ասենք, որ այս ամենօրյա մեծ աշխատանքը ևս բացառիկության պարունակություն ունի իր բովանդակության մեջ:

դ/ 2005թ. դպրոցը միասնական բնությունների առաջին և միակ կենտրոնն էր, այսօր՝ մի քանի կենտրոններից մեկը, դպրոցի տնօրենը՝ որպես բնական կենտրոնի ղեկավար, բոլոր բնությունների օրերին, առավոտյան 7.00-ին (էլ չենք խոսում գործին անջվող կազմակերպչական խնդիրների մասին) պետք է լինեք տեղում, և գտնվեց տեղում միշտ նույն ժամին՝ փոքր-ինչ անգամ չմտածելով որևէ այլնի մասին: Տարիներ շարունակ ի պաշտոնն համատեղելով հիմնական աշխատանքը հանրային, լրացուցիչ աշխատանքի հետ:

յ/ Դատիվ ունենք հնչեցնելու՝ տարիներ ի վեր դպրոցի տնօրենությունը, տնօրենը Արցախի Հանրապետության շրջանների շատ գյուղերի դպրոցների համար կրել են արտահաստիքային-մեթոդական օգնության կենտրոնի պատիվը՝ սեփական հեղինակությամբ ստեղծած պլանների, մեթոդական ուղեցույցների, անգամ, ընդհանրական բովանդակության հրամանների և շատ այլ գրությունների հարցում օգնության իրենց ձեռքը պարզելով:

Շուրջ 20 և ավելի տարիների ընթացքում դպրոցը մասնակցել է տարբեր մրցույթների և նվաճել պատվավոր շատ տեղեր: Այսպես, 2007-2008 ուստարում «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի հանրապետական փուլում՝ առաջին տեղ, 2009-2010 ուստարում «Արտահասարանական-արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգում՝ հարթանակ մրցույթի քաղաքային փուլում, 2015թ. «Ռազմահայրենասիրական դաս-

տիարակության լավագույն դրվածք» անվանակարգում՝ հաղթանակ հանրապետական փուլում (տնօրենների մրցույթ): ՀՀ մշակույթի նախարարության կողմից դպրոցի տնօրենը արժանացել է պատվոգրի՝ ռազմահայրենասիրական դաստիարակության, պետական խորհրդանիշները հավուր պատշաճի հանրահռչակման համար:

...Եվ բազում-բազում շնորհակալագրեր, պատվոգրեր, մեդալներ...

զ/ 2010 թվականից սկսած, հ. 2 դպրոցը քաղաքում առաջին դպրոցներից էր, որ ստանձնեց ԿՄԴՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) աշակերտների հետ տարվող ներառական ուսուցման մանկավարժական բարդ ու դժվարին, համակողմանի խնդիրներով ուսումնական աշխատանքների իրականացումը: Ուսումնական ծրագիր, որն իրենից ծավալուն նորամուծությամբ, կորագրատիարակական աշխատանքների մեծ ու բարդ գործառնությունների բաղադրիչ է ներկայացնում: Ներառական ուսուցման մասին թերևս գրվեց մեկ-երկու միտք, նախադասություն, բայց գործառնությունների իրականացումը, իրոք, իրենից ներկայացնում է տարիների ջանք ու աշխատանք: 2013թ. դպրոցում բացվել է նաև չորս խմբերից կազմված նախադպրոցական բաժանմունք՝ իր բոլոր խնդիրներով, պահանջներով: Դպրոցի տնօրենությունը, բաժանմունքի աշխատողները դժվարությամբ, բայց կարողացան բազում խնդիրներով (վարիչ՝ Գայանե Ազիզյան) աշխատանքները հնարավորինս լավ իրականացնել դժվարին, հարմարեցված պայմաններում: Ծավալուն ու դժվարին պահանջներով նախադասության՝ մեծ ու ծավալուն պահանջներով հանրակրթական դպրոցի ներսում. այսպես կարելի է ներկայացնել նախակրթարան-դպրոց միասնական կառույցի գործունեությունը:

Այդ, բառերն ու շարադրանքը հեշտ են տեղադրվում, դառնում միտք ու նախադասություն, բայց որ ամեն բառ ու միտք իր մեջ մեծ ու քրտնաջան աշխատանք է ներառել և դարձել տարիների կերտված պատմություն՝ ճշմարտություն է, բացառիկ ու նվիրյալ աշխատանքի արդյունք:

է/ Տարիներ շարունակ դպրոցը եղել է ուսուցիչների որակավորման դասընթացների, օլիմպիադաների անցկացման կենտրոն և շատ հաճախ պարտավորված էր չորս-հինգ օր առաջ՝ դասագործընթացի օրերին, շուրջ 300-500 աշակերտի այլ դասասեսնակներում տեղավորելու, տեղաշարժելու, կազմակերպչական ծավալուն խնդիրները լուծելու առ այսօր, և դասընթացների ժամանակ տնօրենությունը, ողջ հանրույթը ողջամտությամբ իր հնարավոր ծառայություններն են մատուցել և մատուցում են բոլոր-բոլորին:

ը/ 44-օրյա դաժան պատերազմից հետո Արցախում առաջինը 2020թ. նոյեմբերի 17-ին, երբ քաղաքի փողոցներում դեռևս հաստուկենտ մարդիկ էին երևում, հ. 2 դպրոցն էր առաջին կրթօջախը՝ իր տնօրենությամբ և ուսուցչական անձնակազմով, որ որպես կենտրոն իր ողբերն է բացել ոչ միայն դպրոցի սաների, այլև բոլոր տեղահանվածների և, ընդհանրապես, հայրենիք վերադարձած բոլոր մեր սովորողների համար: Կարծում ենք, հետպատերազմյան առաջին իսկ օրերին գրանցված այս իրողությունը ավելի քան մեծ բացառիկություն ունի իր մեջ:

Իսկ 2021թ. հունվար-փետրվարից մինչ օրս դպրոցում են տեղակայված գործունեության իր ողջ ծավալով Շուրջի Խ. Աբովյանի անվան դպրոցը, ՄՊՍԿ-ն, էլ չենք խոսում տարիներ ի վեր դպրոցում գործող սպորտային զանազան խմբակների մասին:

Վերոնշյալի մասին ամեն ինչ բառերով հեշտ է գրվում, մինչդեռ իրականությունը, իրողությունն ու երևույթները ճիշտ հունի մեջ պահել, համակարգված գործ ու իրողություն է դարձել քրտնաջան, գուցե ավելի ճիշտ՝ քրտնաթոր աշխատանքի, միասնական, համախմբված թիմային աշխատանքով:

Շնորհակալություն նշածս թիմային աշխատանքով կայացած երևույթին...

թ/ Շուրջ 23 տարիների ընթացքում դպրոցը ղեկավարած տողերիս հեղինակը, մշտապես գարկերակն ու շնչառությունը պահելով ժամանակի մարտահրավերներին, հրապարակել է 50-ից ավելի մանկավարժամասնագիտական,

մեթոդական, խոհափիլիսոփայական թեմաներով հողվածներ, ակնարկներ, էսսեներ, որոնցում փորձ է արվել ճիշտ, ժամանակահունչ տարբերակներով պատասխանել մարտահրավերներին, լուծումներ տալ դպրոցի և հանրության առաջ ծառայած խնդիրներին, և կարծում ենք, այդքան ծավալուն ստեղծագործությունների, հողվածների մեջ ևս կլինեն բացառիկություն պարունակող էական մտքեր՝ կյանքի մեջ դրված, իրողություն դարձած:

ժ/. Շնորհակալանքի, երախտագիտության խոսք հնչեցնելով այդ տարիների ուսուցչական ողջ հանրույթի, տնօրենության բոլոր ներկայացուցիչների հասցեին (Էլենուրա Բաբայան, Ժամնա Հովսեփյան, Իրա Գաբրիելյան, Գյազուն Գեղամուշ, Անահիտ Մելքունյան, Մանուշակ Բաղունյան, Վալտենա Տոնյան, Լիլիանա Գաբրիելյան, Կարինե Իշխանյան, ԴԱԳԿ Եմմա Ամյան), հարկ է նշել և առանձնակի գնահատանքի խոսք հղել 2008թ. Ույեմբերից դպրոցի ուսումնական գործընթացի ղեկավարումն ստանձնած փոխտնօրեն Նունե Բեգլարյանին՝ անդուլ ջանքերի, հետևողական, արդյունավետ գործունեության, ոսկերիչի, ակնագործի պատասխանատվությամբ, գնահատանքի արժանի աշխատանքի համար, արտադասարանական և արտադպրոցական ծավալուն աշխատանքների պատասխանատու, ստանձնած պարտականություններին պատասխանատվությամբ վերաբերվող, գործին լավագույնս տիրապետող Կարինե Աբրահամյանին և համաքաղաքային օրինակելի միջոցառումների հեղինակ, այժմ ուսումնական գծով փոխտնօրեն Քրիստինե Գրիգորյանին, ԴԱԳԿ երիտասարդ ու խոստումնալից կազմակերպիչ Մարիանա Բաղունցին, պարտաճանաչ, համեստ ու պատասխանատու գործունեությամբ, շնորհալի գործավար-մեքենագրուհի Անահիտ Բաղդասարյանին, դպրոցի ողջ ուսումնասանդակ, տեխնիկական անձնակազմին (տնտեսվար՝ Ալյոշա Առուստամյան, 2005 թվից մինչ օրս տնտեսական գծով փոխտնօրեն՝ Արմեն Հարությունյան) և նորից ու կրկին՝ ողջ մանկավարժական անձնակազմին:

2008 թվականից մինչ օրս հ. 2 դպրոցում առարկայական մեթոդիավորումների նախագահների, տնօրենության և առանձնապես փոխտնօրեն Ն. Բեգլարյանի հետևողական աշխատանքի արդյունքում ոչ մի դասաժամ չի մնացել ազատ, փոխարինվող բոլոր պարամունքները կազմակերպվել, իրականացվել են, բոլոր հաշվետվությունները, հաշվեցուցակները վարվել են ժամանակին, անթերի, թվային մեծ ճշգրտությամբ...

Վերոգրյալը, կարծում են, դպրոցավարության մեջ գրանցված բացառիկություն պարունակող իրականություն է:

...Եվ այսօր դպրոցի ուսուցչական հանրույթը, տնօրենությունը, աշխատող ողջ անձնակազմը լծված են նորարար մտքերով, գաղափարներով, անելիքներով լի ստանձնած մեծ գործին, որպես գործը առաջ տանող քարշակի, լույսնոտիվի՝ ջանում են անել ամեն ինչ հանուն մեր սերունդների ճիշտ ու անսխալ դաստիարակության, հանուն մեր անփոխարինելի, մեր ջքնաղ Արցախ աշխարհի, մեր հայրենիքի...

Ինչ խոսք, իրավամբ, ստեղծված, արարված բացառիկ ու մնայուն արժեքների շարքն անսպաս է, դեռ ինչքան չասված-չգրված մնայուն երևույթներ՝ մնացած խորքում և, երևի, սերունդների, աշխատողների հիշողության մեջ...

Վերջաբանի տեսքով

Նորից ու կրկին...

Շնորհակալություն արժանավոր ուսուցչական և աշխատող ողջ անձնակազմին, դպրոցի տնօրենության գործող թիմին, իմ մանկավարժական գործունեության տքնալից, բայց ոսկետառ էջերի՝ 23 տարիների գործընկերներին, ինձ շատ հարազատ մարդկանց:

Եվ ավագ գործընկերոջ խորհրդի կարգով. Արդար է, ճիշտ է լավ աշխատողի վաստակը գնահատանքի արժանացնելը:

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (ԱՄՐՅԱՆ) Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի տնօրեն

ՀԱՎԵՐԺ ՆԵՐԿԱ

ՆԵՆՍՈՆ ԱՆԷՔՍԵՅԻ ՀԱԿՈՔՉԱՆՅԱՆ



- Ես՝ Շուշիից,
- Ես՝ Երևանից,
- Ես՝ Ստեփանակերտից...
- Ես՝ աշխարհի օտար երկրներում
ծնված հայս...

Ծառայության անցնելով Երկիր մոլորակի հայ հողում, համդիսավոր երդվում եմ անձնվիրաբար ծառայել հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը և Արցախի Հանրապետությանը...

Ամբողջ միջոցառումն անցավ այս ոգով: Հերոսի համառոտ կենսագրականը պատմում է նրա ուղղագիծ կյանքի մասին: Ավարտել է հ. 2 դպրոցը: Ստացել է բարձրագույն կրթություն: Մարտական ուղին սկսել է 16

կի հրամանատարից մինչև դասակի ու հրաձգային գումարտակի հրամանատար: Մասնակցել է 2020թ. Արցախի դեմ Ադրբեյջանի սանձազերծած պատերազմին: Ձուլվել է հոկտեմբերի 10-ին՝ փառքով պսակելով իր մարտական ուղին ու երկնային կյանքը, թողնելով խիզախ, հայրենամյներ հայի անուն: Հայրենասեր հրամանատար, հոգատար հայր, նվիրյալ որդի, որն ամենակարևոր որոշումն ընդունեց հանուն հայրենիքի փրկության:

Դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, դասղեկ Սևիլ Դանիելյանը, դասարանի ծնող Սոնա Համբարձումյանը, Նելսոն Հակոբչանյանի



ազգական էլյա Արզումանյանը գնահատեցին արիության դասի կենսալից ազդեցությունը: Նման ոգով դաստիարակվող սերնդի շնորհիվ նահատակները միշտ կենդանի են, և հայոց երզն ու երաժշտությունը, հայերեն խոսքը մշտապես կկարկաչի Արցախ աշխարհում: Երկնքից մեզ նայող հերոսների սովոր ու կուռ բանակները այդ են հրամայում:

Արիության դասը կազմակերպել է դասղեկ Ս. Դանիելյանի նախաձեռնությամբ, որին աջակցել է «Արցախի պահեստազորի սպաների միություն» հասարակական կազմակերպությունը: Դասարանի ծնողների կողմից ՀԿ ղեկավար Կարմեն Ասլանյանին հանձնվեց շնորհակալագիր:

Սեփ. լրատվություն

տարեկանում՝ Արցախյան 1-ին պատերազմում դառնալով Բեկորի 1-ին վաշտի կամավոր՝ անցնելով Օմարից մինչև Արաքս, Քարին տակից մինչև Մարտակերտ: Երեք անգամ վիրավորվել է, բայց չի լքել մարտադաշտը: Պատերազմից հետո նա դարձավ ՊԲ անդամ՝ ծառայելով ջո-

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի (Բեկոր) անվան հ. 2 հիմնական դպրոցում նոյեմբերի 9-ին անցկացվեց հերթական արիության դասը, այս անգամ՝ 6-րդ «գ» դասարանում, որը կրում է 2020թ. պատերազմում նահատակված փոխգնդապետ, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ Նելսոն Անեքսեյի Հակոբչանյանի անունը: Այդ օրը նա կդառնար 47 տարեկան: Ամենա հերոսի ծննդյան օրն է, և աշակերտները, որոնք կրում էին նրա պատկերով շապիկներ, ձեռք-ձեռքի տված՝ «Քոչարու» նվագի տակ ներս մտան դասարան, որտեղ ներկա էին Նելսոն Հակոբչանյանի հարազատները, ընկերները, ուսուցիչներ, դասարանի ծնողներ, «Պահեստազորի սպաներ» ՀԿ անդամներ և ներկայացրին հավաքական հայ ժողովրդին:

- Ես՝ Հայկ նահապետից սերված հայ ժողովրդի հայ որդիս,
- Ես՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի դուստրս, Ես՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի որդիս,
- Ես՝ Լուռու մարզից,

ԼՈՒՍԵ ՎԵՏԱԳԻԾ



Մեկ տարի առաջ չարաբաստիկ հիվանդությունը անդարձ տարավ կրթական համակարգի լավագույն կազմակերպիչները մեկին՝ Սոս Արզումանյանին: Մանկավարժ, որ անցել է համակարգի բոլոր օղակներով և կանգնել բարձր պատվադրանքին՝ ինքն էլ կերտելով իր հուշարձանը: Նրան ծանաչողները, իսկ նրանք հազարավորներ են, խորն են գիտակցում Սոս Արզումանյանի մեծությունը և նրա բացակայությունից ցավ

ապրում: Հիշում են նրան որպես մի նտավորականի, որն իր ամբողջ գիտակցական կյանքն անձնացրող նվիրել է արցախյան մանկավարժությանը և հպարտության զգացում ունեն, որ եղել են նրա ժամանակակիցը: Մարդու, որն ինքնատիպ էր իր տեսակով, խառնվածքով, աշխատասիրությամբ, գործին անշահախնդիր նվիրվածությամբ: Նա կարողացել է մեծ ու նվիրական գործ կատարել, արզումանյանական ձեռագիր թողնել համակարգում, շրջապատում իր գիտելիքներով միշտ առաջինը լինել: Իսկ դա հեշտ չէ, եթե ղեկավարում ես մի կառույց, պետք է նրա ամենագիտակը լինես՝ կարողանալու անձնական օրինակով համախմբել աշխատողներին և գործը պատվով առաջ տանել:

Դա առանձնահատուկ ընդգծվեց, երբ 2007 թվականից մինչև թոշակի անցնելը նա ղեկավարում էր կրթական համակարգում ստեղծված նոր կառույցը՝ տեսչությունը: Հենց նրա նմանների մասին են ասում, որ պաշտոնը չի զարդարում մարդուն, այլ մարդը՝ պաշտոնը: Գործի բնույթից ելնելով՝ նա մի քիչ կոշտ էր, բայց և՛ սկզբունքային: Նրա կոշտությունից ոչ ոք չէր վիրավորվում, քանզի միշտ ճշմարտությունն էր ասում, ինչը խիստ անհրաժեշտ է համակարգին: Նա շատ աշխատասեր էր և ձգտում էր, որ բոլորն այդպիսին լինեն, նաև՝ նեցուկ կանգնել, օգնել, օժանդակել, որպիսին ինքն էր իր ոլորտում, ընտանիքում, բարեկամության և ընկերների հանդեպ: Տիկնոջ՝ ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Սուսաննա Ներսեսյանի հետ միասին մինչև ուղև ու ծուծը նվիրված էր կրթական գործին:

Սոս Արզումանյանն իր կենդանության օրոք գնահատվել է արժանավույնս: Նա ԼՂՀ վաստակավոր մանկավարժ է, բազմիցս արժանացել է պատվոգրերի ու շնորհակալագրերի: ԱՅ ԿԳՄՍԻ իր աշխատատեղը թողեց՝ վաստակած «Լուսիսի առաքյալը» գերատեսչական մեդալը, որի առաջին ստացողն էր և առայժմ՝ վերջինը:

Գնաց՝ մեծ վիշտ ունենալով սրտում՝ հայրենի բնօրրանի գերությունը: Տիեզերական զգացողությամբ ականջն իր մանկության օրրան Հին Թաղերի և ընդհանրապես հինավուրց Դիզակ աշխարհի և մեր մյուս գերյալ տարածքների ազատագրության ավետիսին է: Արդարության համար իր կռիվը կանի նաև երկնքում:

Թող Աստծո լույսերի մեջ լինես, Լուսիսի առաքյալ:

«ԼՈՒՍԱՐԸ»

ԱՆՆԱՆԱՅԻՆ ՏՈՆԱՀԱՆՊԵՍ-ՅՈՒՅԱՀԱՆՊԵՍ

Ստեփանակերտի ամենամեծ՝ հ.2 տիպային մանկապարտեզը Աշուն պապիկի ու տատիկի ձեռքերով կրկին իր հյուրընկալ դռները բացեց մեծի ու փոքրի առաջ: Մանկապարտեզի մուտքն ազդարարող «Արցախը մեր տունն է» կամարի ներքո անցնելով, հյուրերը՝ ԱՅ ԿԳՄՍ նախարարության, քաղաքապետարանի ԿՄ բաժնի, քաղաքի մանկապարտեզների ներկայացուցիչներ ու բարեկամներ, ծնողներ ընկան հեքիաթային մի աշխարհ, որտեղ իրականությունով պայմանավորված՝ սրտմաշուք մեր տրամադրությունը ականայից տեղի տվեց զվարթությանը, աշխատասեր արցախցու ստեղծած բերք ու բարիքի առատության պատճառած բերկրանքին, աշնանային գունագեղ բնության գեղեցկությունները զգալու թովչանքին, խաղաղ կյանքով մեր հողում ապրելու երջանկության զգացողությանը...

Այս ամենի հեղինակները փոքրիկներն են՝ հեքիաթային այս մոլորակի հմուտ կազմակերպիչների,



շնորհաշատ դաստիարակների, սիրասուն ծնողների ջանադիր աշխատանքով:

Տոնահանդես-ցուցահանդեսի 15 տաղավարներից յուրաքանչյուրն աչքի էր ընկնում իր ինքնատիպությամբ, ստեղծագործական վառ երևակայությամբ, բնական գեղեցկությունները տարբեր միջոցներով մատուցելու վարպետությամբ: Տերևները, մրգերը, բանջարեղենը, ձեռնաշեն կենդանիներն ու թռչունները, ամեն-ամեն ինչ շնչավորված, ասես լեզու առած խոսում են քեզ հետ ու ասում՝ բնության հետ ներդաշն ապրեք, վայելեք նրա բարիքները, ուրախ եղեք:

Այս նույնն են ասում նաև փոքրիկները՝ մեր կյանքի իմաստն ու ապագան, մեզ ուրախություն պատճառողները: Եվ ասում են թոթով լեզվով, դեռևս անվարժ պարով, աղջիկները՝ հանց երփներանգ թիթեռներ և վաղվա հեզաճկուն նաիրուհիներ, տղաները՝ ապագայի խրոխտ զինվորներ, որ հիմնկվանից սովորում են միմյանց հետ ձեռք-ձեռքի, ուսուսի լինելու ուժի գորությունը:

Բայց մինչ այդ ստանում են օրհնություն: Ստեփանակերտի

ՀԱՅՐԵՆԱՇՈՒՆԶ

ԱՐՑԱԽՆ ԱՊՐՈՒՄ Է



Այո, Արցախն ապրել է, ապրում է, կապրի: Դեռ այս է ոգեշնչում մեր ակտիվ, բարձր...

2020թ. 44-օրյա պատերազմը բեկունճա- յին էր հայ ժողովրդի կյանքում: Կրակոցի («կրակոց» բառը թույլ է աղետի սարսափն...

Երկար, տքնաջան աշխատանքի արդյուն- քում կայացավ Լիլիայի անդրամիկ միջոցա- ռույնը, որին ներկա էին քաղաքապետարանի...

«Կյանքը մահից վերցված արձակուրդ է: Այն լի է գաղտնիքներով, որոնք բացահայ- տելու համար հարկավոր է ուղղակի ապրել:

Արագ է անցնում ժամանակը, տարիները փո- խարհնում են իրար: Եվ մի պահ, երբ կանգ- նում ենք կյանքի ճանապարհին, հասկանում ենք...

Դառը իրականության մասին պատմող խորհմաստ մտքերին հաջորդում է Լիլիայի հոգու աղաղակն արտահայտող բանաստեղ- ծությունը:

խո՛ր, շատ խորն է այն անդունդը, որտեղ ընկել են ցած, Վիշտն արցունքներիս փաթաթված՝ կա- մա՛ց-կամաց իջնում է ցած: Ծչա՛մ, թե՛ արտասվեմ, Ինչպե՛ս իմ մեջ ուժ գտնեմ, Ինչպե՛ս հոգիս ազատեմ այդ տաղտկալի, անկրելի բեռից, Ինչպե՛ս մոռանամ անցյալը, Ինչպե՛ս պատկերացնեմ ապագան Եվ ինչպե՛ս ապրեմ ներկան: Չեմ կարող, չգիտեմ: Գոգիս, կներես, որ ցավն են քեզ ընկեր

դարձրել, Կներես, որ այս դատարկ անապատում Տխրությամբ են ես քեզ պարուրել: Կներես... Արդ, երբ հայրենիքս բզկտված, Գույսերս մարած, Մանկությունս խեղված է, Ամնիտ երազանքս նորից կկրկնեմ, Որ մարած ծրագրը լույս դարձնեմ: Լիլիայի սրտից բխած խոսքերն ակամա- յից դարձել են բանաստեղծություններ, որոնք հաջորդում են իրար. Երկիրս թառամած ծաղկի է նման՝ Խոցված է, տխուր, բազմություն չունի: Եղբայրներս հայի հոտին կարոտած, Օտարի ձեռքում գերի են կրկին: Լսիր՜ թուրքն իր ոտքն է դրել արնաշա- դախ Արցախում, Պիղծ դրոշն է ծածանում Շուշիի անառիկ բերդում: Մեծ է հայոց վիշտը, բայց և անսպառ է հույսը հայի... Մի օր գնալու են Շուշի, Կարոտած սրտով են գնալու, Զայրենի հողիս դարպասներով Պար գալով են մտնելու, Մի օր գնալու են Զաղրուք, Ոտաբորիկ են գնալու, Պապենական տանս դոնով երգելով են մտնելու: Մի օր գնալու ենք Զայրենիք՝ Կարոտած հոգով ենք գնալու, Պանդուխտի կոչումն առիվաբեռ Մեզմից հեռու ենք պահելու:

Հուսադրող բանաստեղծությանը հաջոր- դում է կոչը՝ հանուն հայրենիքի ապագայի. «Ո՛վ հայ մայրեր, ուշքի՛ եկեք, կանգնե՛ք Կոտրե՛ք արյամբ գործված սևը անտեր: Ո՛վ հայ այրեր, ելե՛ք, զարթոնե՛ք, Ձեր կոտրած սիրտը վրեժով լցրե՛ք: Վեր կացե՛ք, եղբայրներ, հզորացե՛ք, Մեր որդիների արյունը զուր չի թափվել: Վեր կացե՛ք, հայեր, համախմբվեցե՛ք, Անիծյալ բախտից ընդմիշտ հրաժարվե՛ք: Վեր կաց, Արցախ, խնդա՛ ու ցնծա՛, Գողզ կարոտ է խինդ ու ծիծաղի Վեր կաց, Արցախ, մեջքդ ուղղիր, Գիշերով անցյալդ՝ ապագադ կերտիր: Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժ- նի վարիչ Թերեզա Ղարախանյանը կարևորեց նման միջոցառումները՝ անվա- նելով դրանք մատաղ սերնդի

հայրենասիրական դաստիարակության գործը միջոց:

Դ. 2 հիմնական դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, ներկայացնելով միջոցառ- ման կազմակերպիչ իր շնորհաշատ սանին, ասաց, որ Լիլիան նշյալ դպրոցում ուսումնա- ռության տարիներին աչքի է ընկել իր բարձր ինտելեկտով, ուսման բարձր առաջադիմու- թյամբ և դպրոցական միջոցառումներին գործուն մասնակցությամբ:

Ելույթով հանդես եկավ նաև տղերիս հեղինակը՝ միջոցառումն անվանելով հայրե- նասիրական բաց դաս և աշակերտներին կոչ արեց հետևել Լիլիայի օրինակին, որը մշտա- պես բարձր է պահել հայրենապաշտ և օրի- նակելի աշակերտի պատիվը:

Համոզված ենք, որ Լիլիան հետագայում գրքերի ու երգերի հեղինակ կդառնա: Նա շնորհալի է տարբեր ասպարեզներում. աս- մունք, շարադրությունների մրցույթ, գեղարվեստական միջոցառումներ: Այդ աստվածատուր պարմանուհին իրեն դրսևորել է որպես օրինակելի աշակերտու- իի, որից մշտապես կարելի է նոր բան սովո- ռել:

Միջոցառման ավարտին Լիլիան հանդես եկավ շնորհակալական խոսքով.

- Եթե իմ հոգուն նոր բանաստեղծություն- ներ ծնվեն, ես դրանք խնամքով կհավաքեմ և գիրք կիրատարակեմ՝ մատաղ սերնդին տո- գորելու անմար հայրենասիրությամբ, գեղե- ցիկն ընկալելու հավատով: Պատերազմի մասին լսել են մեծերից և կարդացել հայոց պատմության էջերում, որոնցում շատ զուշորեն թաքնված է պատերազմի սար- սափելիությունը: Իսկ այժմ մենք մեր պատե- րազմն ունենք՝ տեսած սեփական աչքերով, զգացած՝ սեփական մաշկի վրա: Արցախն աղոթք դարձած սրբություն է ինձ համար: Արցախն իմ տունն է, իմ օջախը, վիրավոր, բայց կուռ արմատը: Եվ չնայած բոլոր դժվա- րություններին, Արցախն ապրել է, ապրում է և կապրի:

Նշենք, որ Լիլիա Նազուխանյանը սովո- ռում է 11-րդ ավագ դպրոցի 11-րդ դասարա- նում և ցանկանում է դառնալ ճարտարա- պետ: Զաջողություն մաղթենք նրան իր նպատակներին հասնելու ճանապարհին:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ

Սուրբ Զակարե եկեղեցու քահանա տեր Մի- նասն առաջին անգամ չի օրհնության ծես կա- տարում այս մանկապարտեզում և ամեն անգ- ամ իր հիացմունքն է արտահայտում ստեղծ- ված դրախտային տեսարանից: «Ոսկե աշ-



նան»՝ Բերքի տոնի խորհուրդն էր կատար- վում մանուկների կողմից, և բոլորի համար մեծ ուրախություն է այդ պայծառ տոնին մաս- նակցելը: Եվ Տեր հայրի օրհնաբեր բարեմաղ- թանքը բոլորի սրտի անկեղծ ցանկությունն է.

թող խաղաղություն լինի մեր Արցախ աշխար- հում, որպեսզի կարողանանք հասնել մեր բաղձալի նպատակին՝ անկախությանը, ազատությանը, և մենք որոշենք, թե ինչպես ապրենք մեր կյանքը: Մեր բոլոր միջոցառում- ներն անցկացվում են նահա- տակների հայացքների ներ- քո: Նրանք իրենց կյանքը գո- հաբերել են հանուն մեր մա- նուկների՝ մեր ապագայի

խաղաղ կյանքի, հանուն մեր ժո- ղովրդի գո- յատման: Փառք ու պատիվ

նրանց: Բարեմաղթանքի և շնորհակա- լության խոսք մանուկներին, ման- կապարտեզի կողակտիկին, ծնող- ներին ասում են նաև քաղաքա- պետարանի ԿՍ բաժնի վարիչ Թե- րեզա Ղարախանյանը, ԿԳՄՍՆ մախադպրոցական բաժնի նախ- կին պետ Աննա Այվազյանը, ման- կապարտեզի վարիչ Ռենա Բար-



խուղար- յանը: Եվ ամենալա- վատեսա- կանը, ինչ- պես միշտ, դարձյալ երեխանե- ռի շուրթե- ռից բար- բառն է. Արցախ, օմբը փոտ չի քցիս, Ծերքը սրտեղ խաչ չի տինիս, Դարդը վեր կա, ճար էլ կինի, Զարին հետան պարին կինի: Թոխա ու կայծակ, թոռ ու կարկուտ, Թարս օրերա, կկյան, քինան, Տակնեղ խորնա, ծիլըս տըլան, Պողո պլավ, հայ Ղարաբաղ... Ս. ԿԱԶԱՏՐՅԱՆ

ԲԱՐՔԱՆ

ԱՐՅԱՆՑԻՆ՝ ԲԱՌԱՍՏԵՐՆԸ



Լեզվաբան, բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն ԲԱՂՂԱՍՐՅԱՆԻ արխիվից

ՀԱՐԱՂԻՐ ԲԱՅԵՐ

Ա

ԱխՎ ԱՆԵԼ: Զգվել, տհաճություն զգալ: ԱխՈՒՎԻՇ ԱՆԵԼ: Դառաչել, հոգոց համել: Ախ ՔԱՇԻԼ: 1.Դառաչել, ողբալ: 2.Երանի տալ, տենչալ մի բանի համար: ԱԿԵՆ ԿԵՆԱԼ: 1.Կարգին մնալ: 2.Մաքուր կենցաղով ապրել: ԱԿԸ ՏԱԼ: 1.Նայել: 2.Ստուգել: 3.Փնտրել: 4.Մեկին լարել մյուսի դեմ: ԱԿՈՒՎ ԿՏՐԵԼ: 1.Սևանալ, սգեղանալ: 2.(փխբ.) Զարագուշակ խոսել: ԱՅ ՏԱԼ: Կախեցնել, սպառնալ: ԱՂՆԱՂԱԶ ԱՆԵԼ: 1.Մինչև ճաշը մի քիչ ուտել: 2.Տարվա ցորենի բերքից քիչ աղալ: ԱՂԿԵՍՈՒԹՈՒՄ ԱՆԵԼ: Խորամանկել: ԱՂ ՏԻՆԻԼ: 1.Բանջարեղենը թթու դնել: 2.Կաշին աղաջրում դնել: 3.Աղջկան չամուսնացնել: ԱՂ ՕՏԵԼ: 1.Թքվել: 2.Աղի կամ աղաջրի մեջ երկար մնալով հագնել: ԱՍ ԱՆԵԼ: (մանկ.) Ուտել: ԱՎՈՒԹ ՕՆԵԼ: 1.Լսել, ունկնդրել: 2.Լսածը կատարել: ԱՎՈՒԹ ՏԻՆԻԼ: Լսել: ԱՆՂԱՐ ՄՆԱԼ: 1.Անտեր, անխնամ մնալ: 2.Անուշադրության մատնվել: ԱՆԵԼ ՏԱԼ: 1.Բանեցնել: 2.Թույլ տալ, որ իրեն բեղմնավորեն: ԱՆԵՍԿ ՏԱԼ: Անիծել: ԱՆԿՅԻՐ ԱՆԵԼ: Բերանացի սովորել: ԱՆՊԱՂԵՎ ԱՆԵԼ: Անպատվել, պատվից զրկել: ԱՆՊԱՂԵՎ ԻՆԻԼ, ԱՆՊԱՂԵՎ ՏԵՆԱԼ: Պատվազրկվել: ԱՆՈՒՄ ԱՆԵԼ: Ամուսնության առաջարկություն անել: ԱՆՈՒՄ ԹՈՂՆԵԼ: Բարի անուն թողնել: ԱՆՈՒՄԸ ՏԱԼ: Հիշել, հիշատակել: ԱՆՈՒՄԸ ՔՅԻԼ: 1.Խայտառակել, նշավակել: 2.Խայտառակվել, նշավակվել: ԱՇԸ ԸՆԳՆԵԼ: 1.Այլուրի և թանի շաղախի մեջ կաշին կակղել: 2.Սաստիկ շոգել: ԱՇԿԱ ԸՆԳԱԾ: Հեղինակազրկված, վարկաբեկված: ԱՇԿԱՆ ԸՆԳՆԵԼ: Ատելի դառնալ: ԱՇԿԱՎ ԱՆԵԼ: Աչքի շարժումով դիմացինին մի բան հասկացնել, ակնարկել: ԱՇԿԱՎ ՏԱԼ: Իբր չար աչքով վնասել: ԱՌՅՈՒԾ ԿՏՐԵԼ: Արիանալ:

Բ

ԲԼԻԲԱԼԻ ԱՆԵԼ: Աղաչել: ԲՈԼԹԱ ԹԱԿԵԼ, ԲՈԼԹԱ ՏԱԼ: Փոքր տարածության վրա անցուդարձ անել: ԲՐԸԲՐՈ ԱՆԵԼ: Առատության մեջ ապրել: ԲՈՒՐԹԻ ՏԱԼ: Հրել, բռթել:

Դ

ԴԲԵՏ ՄՆԱԼ: Ետ մնալ, ուշանալ:

Ե

ԵՐ ԸՆՑՆԵԼ: Վեր բարձրանալ, մագլցել: ԵՐ ԻՆԻԼ: 1.Բարձրանալ: 2.Հեծնել: 3.Բեղմնավորել: ԵՐ ԿԵՆԱԼ: 1.Վեր կենալ: 2.Արթնանալ: 3.Ցցվել (առնանդամը): ԵՐ ՀԱՆԵԼ: Օգնել բարձրանալ: 2.Օգնել հեծնել:

ԵՐ ՔԱՂԵԼ: Հավաքել: ԵՐ ՔՅԻԼ: 1.Ուռչել: 2.Հղիացնել:

Զ

ԶԿՈՂՅԱՍ ԿՅԱԼ: Զկուտալ:

Ը

ԸՇԿՅՈՒՄ ԻՆԻԼ: Քահ-քահ ծիծաղել: ԸԶՎԸԾԵԽ ԱՆԵԼ: 1.Արագ աշխատել: 2.Շռայլել, ծախսել: ԸՈՂՆԱՍՈՐ ՏԱԼ: Գործիքը սրել:

Թ

ԹԱԹԱԽ ԱՆԵԼ: Թաթախել: ԹԱԹԱԽ ԻՆԻԼ: 1.Թաթախվել: 2.Մասնակից դառնալ, խառնվել (մի բանի): ԹԱԹՈՒՎ ԱՆԵԼ: Բեղմնավորել (թռչուններին): ԹԱՎ ՕՏԵԼ: Ծեծվել: ԹԱՆՉԻՆ ՏԱԼ: Հևալ: ԹԱՆՉՈՑՆ ԸՆԳՆԵԼ: Սաստիկ հևալ: ԹԱՌԱՆԶ ՔԱՇԻԼ: Հառաչել: ԹԱՌ ԻՆԻԼ: Թառել: ԹԱՌ ՏԱԼ: 1.Շորերը փռել: 2.Կախել: ԹԱՎՈՒԼ-ԹԱՎՈՒԼ ԱՆԵԼ, ԹԱՎՈՒԼ ՏԱԼ:

1.Թավալվել, 2.Թավալել: ԹԱՎՉԸՍ ՏԱԼ: Փետուրները, մազը, բուրդը թափել շոգ եղանակով: ԹԱՓ ՏԱԼ: 1.Թափահարել: 2.Լուցկին վառել: 3.Շորերը թափահարել: ԹԵՂ ԴՆԵԼ, ԹԵՂ ՏԱԼ: Կիտել, իրար վրա դարսել:

ԹԵՅՆԸ ՏԱԼ: Թիկնել: ԹԵՎԻՆ ԱՆԵԼ, ԹԵՎԻՆ ՏԱԼ: Թռչել: ԹԵՐԻՄԱՇ ԱՆԵԼ: Կիսաեփ անել: ԹԵՐԻՄԱՇ ԻՆԻԼ: 1.Կիսաեփ լինել: 2.(փխբ.)Դարաբերությունները լարվել: ԹԵՓԸՈՂՅԱՆ ԱՆԵԼ: Փետրել: ԹԵՓՈՂՅԱՆ ԻՆԻԼ, ԹԵՓՈՂՅԱՆ ՏԵՆԱԼ: Փետրվել:

ԹԵՓՈՒՆ ՏԱԼ: Թպտալ: ԹԵՔՅ ԸՆԳՆԵԼ: 1.Թիկնել, թեքվել: 2.Հիվանդանալ: ԹԻՔՅԱ ԱՆԵԼ: Քիչ ուտել: ԹՂԱՂՈՒՄԿ ԱՆԵԼ: Պահուստել ձմեռվա մրգերը: ԹՈՒՌՈՒՄՔ ՏԱԼ: Հանդիմանել: ԹՈՒՍԱՐ ՄՆԱԼ: Կիսատ, անավարտ մնալ: ԹՈՒՍՈՒՎ ՏԱԼ: Թոխրով աշխատել: ԹՈՒՍՈՒՄ ԴՆԵԼ: Անձրևային եղանակն սկսվել:

ԹՈՒՓԵ ՏԱԼ: Գնդակով խաղալ: ԹՐՉՈՑ ՏԻՆԻԼ: Զոր հացը, մորթին և այլն ջրի մեջ դնել փափկեցնելու համար: ԹՈՒԼՈՒԼ ՏԱԼ: 1.Գլորել: ԹՈՒԼ ՏԱԼ: Թուլատրել: ԹՈՒԼՈՒԼ ԸՆԳՆԵԼ: 1.Գլորվել: 2.Պտտվել:

3.(փխբ) Մեռնել: ԹՈՒԼՈՒԼ ԻՆԻԼ: Գլորվել: 2. (փխբ.) Մեռնել: ԹՈՒԼՈՒԼ ՏԱԼ: Գլորել: 2.Պտտել: ԹՈՒՍԱԹԱՓ ԱՆԵԼ: Թուխաթափել: ԹՈՒՍԱԹԱՓ ԻՆԻԼ, ԹՈՒՍԱԹԱՓ ՏԵՆԱԼ: Թուխաթափվել: ԹՈՒՐ ՔԱՇԻԼ: Թրով սպառնալ: ԹՈՒՓ ԱՆԵԼ: Հավաքել, կուտակել: ԹՈՒՓ ԻՆԻԼ, ԹՈՒՓ ՏԵՆԱԼ: Հավաքվել, կուտակվել: ԹՓԸՅԱ ԱՆԵԼ: Թեփը հանել: ԹՓԸՅԱ ԻՆԻԼ, ԹՓԸՅԱՆ ՏԵՆԱԼ: Թեփահանվել: ԹՓԸՈՒՓՈՒՆ ԱՆԵԼ: Թպտալ: ԹՔՈՒՍՈՐ ԱՆԵԼ: Նախատել:

Ժ

ԺԱՂԱ ԱՆԵԼ: Դեմքը ծամածռել: ԺԻԺՊԱՊԱ ԱՆԵԼ: Դեմքի ծամածռությամբ ծաղրել:

Ի

ԻՄԱՑ ԱՆԵԼ, ԻՄԱՑ ՏԱԼ: Հայտնել, տեղեկացնել: ԻՍՏԸ ՆԻԿԵՆԱԼ: Բարկանալ, ջղայնանալ: ԻՍՏԸ ՆԻԿՅՆԵԼ: Բարկացնել, ջղայնացնել: ԻՐԵՍ ԱՆԵԼ: Համարձակվել, չամաչել, անհարմար չզգալ: ԻՐԵՍ ԱՌՆԵԼ: Երես առնել, շփանալ, լկստվել: ԻՐԵՎՈՒՄ ԻՆԻԼ: Երևալ, հայտնվել: ԻՐԵՍԱՍԵՂ ՊԱՅԵԼ: Մի բան խնդրելու բարոյական հիմք ունենալ:

ԻՓ ՏԱԼ: 1.Եփել: 2.Եռացնել: ԻՔՅ ՕՆԵԼ: 1.Գնել: 2.Խլել:

Լ

ԼԱԼՈՒՇ ԱՆԵԼ: 1.Ոռնալ: 2.Դեմքը ծամածռելով ծաղրել: ԼԱՊՈ ՏԵՆԱԼ: Շատ միհարել: ԼԱՊՈ ԻՆԳՆԵԼ: 1.Թուլանալ: 2.Կախվել, կախված մնալ: ԼԱՑ ԻՆԻԼ: 1.Լալ: 2.Աղը խոնավանալ: ԼԱՓՈՒ ՏԱԼ: Հորձանք, կոհակ, ալիք տալ, ափին խփել, ալեկոծել: ԼԵԼՈՒՄ ԱՆԵԼ: Ցեխտոել: ԼԵԼՈՒՄ ԻՆԻԼ, ԼԵԼՈՒՄ ՏԵՆԱԼ: Ցեխտովել: ԼԵՂԱՃԱՔ ԱՆԵԼ: Սաստիկ վախեցնել, սարսափահար անել: ԼԵՂԱՃԱՔ ԻՆԻԼ, ԼԵՂԱՃԱՔ ՏԵՆԱԼ: Սարսափել, վախեցնալ, ահաբեկվել: ԼԵՂ ՏԱԼ: Լողալ, լողանալ: ԼԵՆՔՅԻՆ ՏԱԼ, ԼԵՆՔՅ ՏԱԼ: Գիրանալ, չաղանալ: ԼԵՇԱՎ ԸՆԳՆԵԼ: Ուտելու բան գտնել ու մոռանալ հիմնականը: ԼԵՆՈՂՅԱՆ ՏԱԼ: 1.Սովորականից տարբեր ձևով հաչել (շունը): 2.(փխբ.) Զրպարտել: ԼՆԳԸԼՆԳՈՒ ԱՆԵԼ: Կաղալով աջ ու ձախ երերալով քայլել: ԼԿԿՈՆԸ ԵՐ ԻՆԻԼ: Լացակունած լինել: ԼՈՔ ՏԱԼ: Ցատկել: ԼՈՒՋ ՏԱԼ: 1.Լիզել, 2.Լիզելով մաքրել: ԼՈՒԼ ԿՏՐԵԼ: Սաստիկ հարբել: ԼՈՒՍԱՅԱԶ ՏԱԼ: Իզուր հաչել:

Խ

ԽԱՂ ԱՆԵԼ: Խաղալ: ԽԱՇ ԸՆԳՆԵԼ: 1.Խաչվել, մի քիչ եփվել: 2.(փխբ.) Սաստիկ շոգից նեղվել: ԽԱՇ ՏԱԼ: Խաչել: 2.Եփել: ԽԱՉՎՊՊ ԱՆԵԼ: Խաչածն հանգուցել: ԽԱՌՆՈՒՐԴ ԱՆԵԼ: Զուրը բարեխառն դարձնել: ԽԵԼՔ ԱՆԵԼ: 1.Լավ մտածել, կշռադատել: 2.Ընդունելի բան ասել կամ անել: ԽԵԼՔԸ ԿՏՐԵԼ: Հասկանալ, ըմբռնել: ԽԵԼՔԸ ՏԱՆԵԼ: Սղորեցնելով խաբել: ԽԵԼՔԸ ՔՅԻՆԻԼ: 1.Ուշագնաց լինել, ուշաթափվել: 2.Հիանալ, զմայլվել: 3.Գժվել: ԽԵԼՔՈՒ ԿՅԱԼ: Խելքանալ: ԽԵՉԱՎ ՏԱԼ: Նեցուկ, հեմարան դնել: ԽԶԸԿՈՒՅՆ ՏԱԼ: 1.Ծեծել, պատժել: 2.Աշխատանքից հեռացնել: ԽԸՆԴՈՒՄՔՅԱ ՏԱԼ: Ամփոք թուռակը հեծվորին վայր գցելու համար հետևի մասը թափով բարձրացնել: ԽԸՈՂՅԱՆ ՏԱԼ: 1.Սպանել: 2.Ծառը արմատից կտրել: ԽԸՈՂՅԱՆ ԻՆԻԼ, ԽԸՈՂՅԱՆ ՏԵՆԱԼ: Ժամանակից շուտ մեռնել, սպանվել: ԽԻՆՁՈՒՌՈՒՄ ԱՆԵԼ: Նեմգություն, խարդախություն անել: ԽՂԸՅԱ ԱՆԵԼ: Հողահան անել: ԽՂԸՅԱ ԻՆԻԼ: ԽՂԸՅԱ ՏԵՆԱԼ: Հողահան լինել: ԽՆԸՄԱՔԱՐ ՏԻՆԻԼ: Աղջկան ամուսնացնել կամ նմալ: ԽՈՒՍԱՎ ՄՆԱԼ: Հղիանալ: ԽՈՍԿԱՎՈՒՄ ԱՆԵԼ: Խոսքով հաղթել: ԽՈՍԿԱՎ ԻՆԻԼ: Երկար խոսել և ուշանալ: ԽՓԸԽԱՓԻ ԱՆԵԼ: Խաբխաբել:

Ծ

ԾԱԼ ԸՆԳՆԵԼ: 1.Ծալվել: 2.Թուլանալ: ԾԱՍՍ ԱՆԵԼ: Ծախսել: ԾԱՍՈՒ ԱՆԵԼ: Սկսել ոտքի կանգնել (երեխան): ԾԱՅԱՅԱՎ ԸՆԳՆԵԼ: Քաջքով ընկնել: ԾԱՐԱՎԸ ԿՏՐԵԼ: Ծարավը մեղմել: ԾԱՓ ՏԱԼ: Ծափահարել: ԾԻԾԱՂԱՍԵՂ ՇԻՆԻԼ: Ծաղրի առարկա դարձնել: ԾԻԾԱՂԱՍԵՂ ՏԵՆԱԼ: Ծաղրի առարկա դառնալ: ԾԻԾԱՂԸ ՊՐԾՆԵԼ: Պոռթկալ: ԾԵՂՊԱՍ ԱՆԵԼ, ԾԵՂՊԱՍ ՏԱԼ: 1.Արտը մանգաղով հնձելու ժամանակ մի բուռ հասկը ծեղով, ծղոտով կապել: 2. (փխբ.) Ախորժակով ուտել: ԾԵՆ ՏԱԼ: 1.Կանչել: 2.Հրավիրել: 3.Քվեարկել: 4.Ելույթի իրավունք տալ: ԾԵՐՔԱՎԸ ԿՅԱԼ: Կարողանալ, ի վիճակի

լինել: ԾԵՐՔԱ ԸՆԳՆԵԼ: 1.Ուժասպառ լինել: 2.Սաշվել: 3.Մեռնել: ԾԵՐՔԵՐԸ ԿՅՈՒՇ ԱՆԵԼ: Զեռքերի ափերը իրար կցել: ԾԵՐՔԸ ԽՆԹՐԵԼ: Ամուսնության առաջարկ անել: ԾԵՐՔՅ ՅՈՐ ՕՆԵԼ: Հրաժարվել: ԾԵՐՔ ՀԱՑՆԵԼ: Օգնել, օժանդակել: ԾԵՐՔ ՏԱԼ: 1.Զեռքը սեղմելով ողջունել: 2.Շահավետ լինել: 3.Դիպչել: ԾԵՔԸ ՏԱԼ: 1.Մեղունների ծագ հանել: 2.Մեղունների մայր փեթակից անջատվել: ԾԻԼ ՏԱԼ: 1.Հասակ առնել, մեծանալ: 2.Ծիլեր արծակել: ԾԻՔՅԻՊՈՒՔԻ ԱՆԵԼ: Իրարից քաշքշելով ջանալ մի բան պոկել: ԾԻՔՅ ՏԱԼ: 1.Ձգել: 2.Քաշել: 3.Մեկնել, երկարել: 4.Ծխել: 5.Մրցել: ԾԼԱՎԵՆ ՏԱԼ: Մի բանի համար շատ կարոտել: ԾՐԸԿԱԹՈՑՆ ԸՆԳՆԵԼ: Անձրևային եղանակն սկսել: ԾՐՆԱԳՅ ԻՆԻԼ: Տեղից արագ վեր ցատկել: ԾՐԵՐԸ ՅՐԱ ԱՆԵԼ: Կուրծքը կաթով լցվել: ԾՎԱՎԵՆ ՏԱԼ: Զոր պատառը դժվարությամբ կուլ տալ: ԾՂԾԱՄ ՏԱԼ: Առանց ախորժակի ուտելիքը ծամծամել: ԾՄՈՆԸՀԱՆ ԻՆԻԼ: Զմեռը վերջացնել: ԾՆԴԸՐԹԻԹԵՎ ԱՆԵԼ: Կշռադատել, երկար խորհել: ԾՆԸԿԱՆԻՊԱՎԵ ՏԱԼ: Զնագնդի խաղալ: ԾՈՒՍ ՏԱԼ: Մեղվափեթակներին բուժման նպատակով ծուխ տալ: ԾՈՐ ՏԱԼ: 1.Ծորել: 2.Բառերի վերջին վանկը երկար արտասանել: ԾՈՑԸ ԹԻՇՆԵԼ: Լավ վաստակ ունենալ: ԾՈՑԸ ՄՆԵԼ: Գիրկը մտնել: ԾՊՈՒԼԻ ԱՆԵԼ: Թույլ լուսավորել: ԾՎԱՍԳՅԸ ԿՏՐԵՆԵԼ: 1.Ձայնը կտրեցնել: 2.Սպանել: ԾՎԱՍՆ ԶՅՈՒՅՆԵԼ: Զուռնան, դուրուկը նախապարտատել նվագի համար: ԾՈՒԾՈՒՆ ԱՆԵԼ: 1.Ձարդել, փշրել: 2.Սաստիկ ծեծել:

Կ

ԿԱԹՈՒԿ ՏԱԼ: 1.Գերհասունանալուց պտուղը ծառից ընկնել: 2. (փխբ.) Մեռնել: ԿԱԼԱՍ ԱՆԵԼ: 1.Շրջապատել: 2.Ծեծել, կոխկրտել: ԿԱԼԱՍԶ ԱՆԵԼ: 1.Կախված հացահատիկը կալի մեջ շեղջել: 2.Շրջապատել, ծեծել: ԿԱՄ ԻՆԻԼ: 1.Կախ անել: 2.Կախել: 3.Կախվել: ԿԱՄ ՏԱԼ: 1.Կախել: 2.Կախաղանով մահապատժի ենթարկել: ԿԱՅԵ ԱՆԵԼ: Զանչ անել, չանչել: ԿԱՊԵԼ ՏԱԼ: 1.Պատրաստել տալ: 2.Հանգուցել տալ: 3.Շղթայել տալ: ԿԱՊԸ ԿՏՐԵԼ: 1.(փխբ.) Անբարոյական դառնալ, լրբանալ: ԿԱՊ ԸՆԳՆԵԼ: 1.Թելը խճճվել: 2.Լեզուն կարկամել: ԿԱՊ ՏԱԼ: 1.Կապել, հանգուցել: 2.Կցել, միացնել: ԿԱՍԱԼԿԱ ԱՆԵԼ: Քիչ ջրով երեսը արագ լվանալ: ԿԱՐ ԱՆԵԼ: Կարել: ԿԱՐԿՈՑ ՏԱՆԵԼ: Կարկտահարվել: ԿԱՐԸ ԿՏՐԵԼ: Ասելիքը համառոտել, կարճ խոսել: ԿՅԵՂ ՊԵՆԱԼ: Թիզով արմուկը չափելով գուշակություն անել: ԿՅԵՆԳՅԱՍ ԱՆԵԼ: Գանգատվել: ԿԵՆԵՔԸ ԿՏՐԵԼ: Ուժը պատել, ձեռիցը գալ: ԿԵՐ ՏԱԼ: Ոտքը ուրիշի ոտքերի արանքում դնելով ու կորացնելով սայթաքեցնել, տապալել: ԿԵՍԸ ՔՅԵԼ: 1.Կեսի հասցնել: 2.Որևէ բանի կեսն անել: ԿԵՐԱԾԸ ՄԱՇԿԱՆ ԿԵՆԱԼ: ԿԵՐԱԾԸ ՄԱՇԿԱՆ ՔՅԻՆԻԼ: Զմարտել: ԿԵՐԿՈՒՄ ԱՆԵԼ: Շատ ուտեցնել: ԿԵՐԿՈՒՄ ԻՆԻԼ, ԿԵՐԿՈՒՄ ՏԵՆԱԼ: Շատ ուտել: ԿՅԵՑ ՏԱԼ: Հագցնել:

(շարունակելի)

ՀԱՅՐԵՆՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՅԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայոց պատմության, նաև աշխարհագրության դասագրքերում կան թեմաներ՝ նվիրված հայկական գաղթավայրերին, նրանց առաջացման, գործունեության, նրանց թողած հետքի, դերի մասին տվյալ երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում: Համոզված եմ, ավելի իմանալը երբեք էլ ավելորդ չէ, իսկ այս կամ այն թեմայի շուրջ լրացուցիչ տեղեկություն հաղորդելն ուսուցչի վարպետության արժանիք է՝ թեման մատչելի և դյուրըմբռնելի դարձնելու համար: Այն նաև լրացուցիչ խթան է աշակերտի աշխարհայացքի ձևավորման գարգացման համար: Այդ համոզմամբ էլ որոշեցի անդրադառնալ հայկական գաղթավայրերի պատմությանը: Ամփստելի փաստ է, որ հայկական գաղթավայրերի պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է:

Պատմությունը մեզ տեղեկացնում է, որ պատմական իրադարձությունների բերումով, լինի դա ռազմական, տնտեսական, քաղաքական, շատ ժողովուրդների առանձին հատվածներ հարկադրաբար հայրենիքից գաղթել են օտար երկրներ: Սակայն նման արտահոսքն անցողիկ է եղել այդ ժողովուրդների կյանքում, ու նրանց չի հաջողվել ստեղծել գաղթավայրեր՝ իրենց ազգային ավանդույթները պահպանելով հանդերձ: Հայ ժողովուրդը այն եզակի ժողովուրդներից է, որ, ունենալով պատմական հարուստ անցյալ, դարեր շարունակ կրել է արտագաղթի ողջ ծանրությունը՝ այն դարձնելով իր կենսագրության բաղկացուցիչ մաս: Կասկած չկա, որ արտագաղթը նախ և առաջ իրականացվել է օտարի կործանարար արշավանքների ու տիրապետության հետևանքով: Ազգաբնակչության մի ստվար զանգված, չկարողանալով դիմակայել ստեղծված անտանելի իրավիճակին, հարկադրաբար թողել է հայրենիքը: Շատ անգամ էլ նվաճողները բռնի ուժով տեղահանել են բնակչությանը ու տարել իրենց պետության խորքերը: Սա է օտար երկրներում հայկական գաղթավայրերի առաջացման հիմնական պատճառը: Գտնվելով օտար երկրներում՝ հայրենիքից հեռու, տվյալ երկրի ժողովրդին կուլ չզնալու, նրան չձուլվելու համար ձգտել են ապրել հավաքական կյանքով, ձեռք բերել որոշակի ինքնավարություն, այդ թվում՝ մայրենի լեզվով դպրոցներ պահելու, սեփական դավանանքի համար եկեղեցիներ կառուցելու հնարավորություն: Նրանք միաժամանակ ապավինել են ազգային ավանդույթներին, զարգացրել ազգային մշակույթը: Հայկական գաղթավայրերը, ապրելով աշխույժ տնտեսական կյանքով, կարևոր դեր են խաղացել Արևելքի ու Արևմուտքի միջև տնտեսական կապերի գարգացման գործում: Նրանք միաժամ-

անակ ձգտել են ամուր կապեր պահպանել հայրենիքի հետ, նպաստել տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք միաժամանակ նպաստել են հայ ժողովրդի ու իրենց հյուրընկալած ժողովուրդների միջև տնտեսական, մշակութային կապերի զարգացմանը, բարեկամական կապերի ամրապնդմանը: Ցավով պետք է նշել, որ հայ ժողովրդի արտագաղթը, բնականաբար, նաև գաղթավայրերի առաջացումը պարբերական բնույթ են կրել և դարձել հայ ժողովրդի պատմության զարգացման ինքնատիպ առանձնահատկություն:

Հայերի առաջին բռնի տեղահանությունը իրականացրել է պարսից շահ Շապուհ 2-րդը՝ 4-րդ դարում բազմահազար հայերի գերեվարելով Պարսկաստան: Երկրի անապահով տնտեսական վիճակից ելնելով՝ շատ-շատերը հարկադրաբար արտագաղթել են Բյուզանդիա: Այդ ժամանակաշրջանի հետ է կապված Կ. Պոլսի հայկական գաղթավայրի առաջացումը: Իսկ բյուզանդական կայսրերը հայերին պարբերաբար բռնագաղթեցրել են Թրակիա, Մակեդոնիա, Բալկանյան թերակղզու այլ երկրներ, դրանով իսկ ջլատել հայերի՝ անկախության համար պայքարը: Երբ խոսվում է հայերի արտագաղթի պարբերականության մասին, առանց դուրսնանգամ վարանելու, կողքին դրվում է հիմնական պատճառը: Պատահական չէ, որ արաբական տիրապետության շրջանում այն նոր թափով առաջ գնաց: Արտագաղթողները նույնիսկ հասան Հյուսիսային Աֆրիկա՝ Եգիպտոս, Եթովպիա և այլ երկրներ: Հայերը զանգվածային արտագաղթի դիմեցին սելջուկների արշավանքներից դրված (11-րդ դար): Այս անգամ հայերը հասան Կապադովկիա, Ասորիք, Միջագետք, Կիլիկիա, Ռուսիա՝ հատկապես Ղրիմ, Մերձվոլգյան շրջաններ: Իսկ Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո (1375թ.) արտագաղթող հայերի քարավանները հասան մինչև Կիպրոս, Իտալիա, Ֆրանսիա և այլուր: Միջին դարերում նկատելի դարձավ արտագաղթի մեջ մի նոր ուղղվածություն. դա մի գաղթավայրից մի այլ գաղթավայր գաղթելն է: Այստեղ արդեն կյանքի համար համեմատաբար ապահով, բարենպաստ պայմաններ փնտրելն է:

Կրա են հասնում մոնղոլական արշավանքները: Հայությունը վերստին բռնում է արտագաղթի ճանապարհը՝ հասնելով մինչև Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Մուղոլա և այլուր: Միջին դարերում Հայաստանի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրների, Միջերկրածովյան պետությունների, Եվրոպական երկրների համար մեծագույն չարիք է դառնում թուրքական տարրի հայտնվելը տարածաշրջանում:

Թուրքական բարբարոսության ազդեցությունը առաջինն իրենց վրա զգում են Կ. Պոլսի հայերը, երբ 1453թ. թուրքերը գրավում են քաղաքը, հիմնովին կործանում Բյուզանդական կայսրությունը և հրոճարակ դարձնում կայսրության մայրաքաղաք Կ. Պոլիսը: Շուրջ 20 տարի հետո (1475թ.) Ղրիմը նույնպես ընկնում է թուրքական գերիշխանության տակ, ու շատ դրիմահայեր ստիպված լքում են իրենց բարգավաճ բնակավայրերը ու գաղթում Լվով, Կամենեց-Պոդոլսկ, Ռաշկով, Յազլովեց ու այլ քաղաքներ:

16-17-րդ դարերում տեղի է ունենում հայերի բռնագաղթ դեպի Պարսկաստան: Ամենասարսափելին Շահ-Աբաս 1-ինի կազմակերպած բռնագաղթն էր 17-րդ դարի սկզբին: Այդ տարիների հետ է կապված Նոր Ջուղայի հայկական գաղթավայրի առաջացումը: Միջին դարերում եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում բուռն զարգացում է ապրում առևտուրը: Կապված առևտրի զարգացման հետ՝ Արևելքի ու Արևմուտքի միջև սկիզբ դրվեց հայ վաճառականական դասի արտահոսքին դեպի Եվրոպայի ու Ասիայի վաճառաչաի կենտրոններ: Բնականաբար, որոշ գաղթավայրեր կորցրին իրենց աշխույժությունը: Փոխարենը ակտիվացան Իտալիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Իրաքի, Սիրիայի հայ գաղթօջախները: 17-18-րդ դարերում ակտիվացավ առևտուրը ռուսական գաղթավայրերում: Հայ վաճառականները յուրատեսակ կապ հանդիսացան մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից՝ Արևելքի ու Արևմուտքի միջև: Մի շարք երկրներում հայերն իրենց նկատմամբ զգացին տնտեսական, քաղաքական, ազգային, կրոնական ճնշումներ, ինչը և պատճառ դարձավ այդ գաղթավայրերից հեռանալուն: Նման ճնշումներ նկատվում էին հատկապես Օսմանյան կայսրության վարած հայափակած քաղաքականության մեջ: Այդ ճնշման տակ հայաթափվեցին Արևմտյան Հայաստանի շատ ծաղկուն բնակավայրեր: Օսմանյան կայսրության հայափակած քաղաքականությունը բացարձակապես դրսևորվեց 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում: Գագաթնակետը եղավ 1915թ. Մեծ եղեռնը: Տարագիր հայերն սփռվեցին աշխարհով մեկ՝ ստվարացնելով եղած գաղութները և ստեղծելով նորերը: Հայ Սփյուռքի գոյացումն առանձնապես կապված է այդ ժամանակաշրջանի հետ նախկին գաղթաշխարհի համեմատ իր տարբերությամբ և առանձնահատկություններով:

Պատմության տարբեր դարաշրջաններում տարբեր է եղել աշխարհասփյուռ հայկական գաղթավայ-

րերի նշանակությունը: Իրենց նշանակությամբ և մեր պատմության մեջ ունեցած դերով առանձնանում են Ռուսական կայսրությունում ստեղծված ինչպես ուշ միջնադարյան, այնպես էլ նոր շրջանի պատմության գաղթավայրերը: Չնայած դրանց արմատները գտնվում են դարերի խորքում, սակայն դրանցից ծլարձակված բարեկամության ծառը շատ ավելի փարթած է մեր օրերում: Սակայն շատ քաղաքական գործիչներ տակալին երկմտանքի մեջ են. Արևմուտք, թե՞ Ռուսաստան: Ինչ խոսք, նրանք լավ չեն սերտել պատմության շատ դասեր: Բայց ժամանակն է սթափվելու, սին խոստումները ծանր ու թեթև անելու և ճիշտ որոշումներ կայացնելու: Միայն կլինի ճակատագրական:

Հայերը Ռուսիայում բնակություն են հաստատել դեռևս 11-րդ դարում: Այդ ժամանակաշրջանի հետ է կապված նաև առաջին հայկական համայնքների ստեղծումը: Ռուսական կառավարությունը դեպի հարավ ծավալվելու, այդ շրջանները բնակեցնելու, տնտեսապես յուրացնելու քաղաքականություն էր վարում: Պատահական չէ, որ Արևելքի հետ առևտրի զարգացմամբ շահագրգռված կառավարությունը արտոնություններ շնորհեց հայ վաճառականներին: Միաժամանակ բազմաթիվ հայ վարպետ արհեստավորներ հրավիրվեցին աշխատելու արքունի մանուֆակտուրաներում: Պետրոս 1-ինը արևելյան քաղաքականության իրականացման գործում վստահում էր շատ հայ գործիչների: Ռուսաստանի հայկական գաղթավայրերի դերն ու նշանակությունը գերազանցապես է նաև եկատերինա 2-րդ կայսրուհին: Հրապարակվեցին հայերին տնտեսական ու իրավական նշանակալից առանձնաշնորհումներ տրվող հրովարտակներ, խրախուսվում էր հայերի վերաբնակեցումը Ռուսաստանում: Ղրիմը Ռուսաստանում հայերի առավել հայտնի գաղթօջախներից է: Տարածաշրջանը հայերին ծանոթ էր դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից: Սակայն հայերի զանգվածային բնակեցումը սկսվել էր 11-րդ դարից: Հայերն իրենց քանակով զիջում էին միայն թաթարներին: 1783թ., երբ Ղրիմը միացավ Ռուսաստանին, հայկական համայնքները վերստին աշխույժացան (թուրքական տիրապետության ժամանակ խիստ նվազել էին): Ղրիմի հայկական համայնքներն ինքնուրույն էին վարում վարչատնտեսական, իրավական գործերը: Այդ գործերը վարում էին քաղաքական ռատուշան և հայ կաթոլիկների դատարանը: Հայերը նշանակալից դեր ունեին թերակղզու տնտեսական կյանքում՝ արհեստագործություն, գյուղատնտեսություն, առևտուր: Համայնքներում կային հայկական դպրոցներ, գործում էր տպարան, հրատարակվում էին գրքեր: Հրա-

տարակվել են «Մասայաց աղավնի» և «Դաստիարակ» պարբերականները: Ղրիմում են ծնվել հայ մշակույթի գործիչներ Հ. Այվազովսկին, Ա.Սպենդիարյանը, Կարա-Մուրզան:

Իրենց գործունեությամբ հայտնի էին Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը: Չնայած հայերն այս շրջաններում վաղուց էին բնակվում, սակայն համայնքներ առաջացել են 18-րդ դարի կեսերից: Պետրոս Առաջինի հրամանագրով (1724թ. նոյեմբերի 10) Հյուսիսային Կովկասի Մերձկասպյան շրջաններում ապրող հայերին շնորհվում էին մի շարք արտոնություններ: Հայտնի էին Մոզդուկի, Ստավրոպոլի, Գեորգիևսկի, Կրասնոդարի, Պյատիգորսկի հայկական համայնքները: Հայերի թիվն այս տարածաշրջանում անցնում էր 43 հազարից: Այս շրջաններն էլ այժմ Ռուսաստանի ամենահայաշատ շրջաններն են: Տարածաշրջանի տնտեսության զարգացման գործում անուրանալի է հայերի ներդրումը: Մեծ էր հայերի ներդրումը նաև նոր ձևավորվող արդյունաբերության մեջ, հատկապես՝ նավթարդյունաբերության (Գրոզնի): Աստրախանի հայկական համայնքների մասին գաղափար ունենալու համար բավական է իմանալ հետևյալը. 1915թ. հայերի թիվը քաղաքում անցնում էր 15 հազարից: 1800-ական թվականներին քաղաքի մետաքսագործական 25 ֆաբրիկաներից 23-ը, բամբակագործական 39 ֆաբրիկայից 36-ը, կաշեգործական 15 ֆաբրիկաներից 6-ը պատկանում էր հայերին: Աստրախանում գործել է Գ. Խալաթյանի հայկական տպարանը, գործել է Աղաբաբյան դպրոցը (գոյատևել է 100 տարուց ավելի): Լույս էր տեսնում «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը:

Ռուսաստանում հայտնի էր նաև Մոսկվայի հայկական գաղութը: Այն Ռուսաստանի հին գաղթավայրերից է: Արդեն 17-րդ դարից Մոսկվայում մշտական բնակություն էին հաստատում ոչ միայն առևտրականներ, արհեստագործներ, այլ նաև մտավորականներ (թարգմանիչներ), դիվանագետներ: Ջուղայի առևտրականները սերտ կապեր ունեին ռուսական կառավարության հետ: Կառավարությունը նրանց շնորհեց Ասիայի և Եվրոպայի միջև տարանցիկ առևտրի իրավունք: Հենց Ջուղայի առևտրականները հոջա Ջաքարի գլխավորությամբ ցարին նվիրեցին հայտնի «Ալմաստե գահը», որ այսօր էլ զարդարում է Կրեմլի զինապալատը:

Լազարյանների մեծահարուստ ընտանիքը նույնպես հաստատվել էր Մոսկվայում և սերտ կապեր ուներ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որը և նպաստեց ստանալ ռուսական ազնվականական տիտղոս:

ԱՆՍԱՀ ՆԵՐՈՍՆԵՐ

ԱՆՁՆԿԵՐ ՆԱՅՈՐԴԻՆ. ԷՐԻԿ ԵՂՅԱՆ



Ծնվել է 1996 թվականի օգոստոսի 4-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ստեփանակերտի 11-րդ դպրոցը: 2014-2016թթ. ծառայել է ԱՀ ՊԲ-ում՝ Վարանդայի (Ֆիզուլի) տանկային գումարտակում: Լինելով ժամկետային զինծառայող՝ մասնակցել է 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմին: 2018թ. անցել է ՊԲ ծառայության որպես պայմանագրային զինծառայող եւ զբաղեցրել 307-ի պետի վարորդի պաշտոնը: 2020թ. մասնակցել է 44-օրյա պատերազմին եւ արիաբար գոհվել Նոյեմբերի 4-5-ը Շուշիի մատույցներում ընթացած հայտնի թեժ մարտերի ժամանակ:

Էրիկ Եղյանի կյանքը դադարեց անժամանակ. նպատակների ու երազանքների կատարման բուռն շրջանում, երբ ամեն ինչ դեռ առջեւում պետք է լիներ: Բայց իր ապրած կյանքով նա վառ ու անմար հիշողություն թողեց իր հարազատների, ընկերների ու սիրած աղջկա սրտերում:

«Էրիկը բարեխիղճ ծառայող էր, ուժեղ ոգով ու կամքի ուժով»,-

պատմում է նրա զինակից ընկեր Արթուր Մաթևոսյանը,- 44-օրյա ժամանակ միասին մասնակցել ենք մարտական գործողությունների, բայց Էրիկը միայն մարտական ընկեր չէր ինձ համար: Ապրելով միեւնույն թաղամասում ու մտերիմ լինելով նրա հոր հետ՝ Էրիկին ավելի լավ ճանաչեցի: Նա ինձ համար դարձել էր լավ ընկերոջ լավ որդի ու ընկեր: Սիրում էր զինվորական ծառայությունը: Ապրիլյան պատերազմին մասնակցելուց ու զորացրվելուց հետո որոշեց մտնել Պաշտպանության բանակ եւ ծառայել հայրենիքին: Կատարվեց նրա ցանկությունը: 2018-ից անցավ ծառայության, սակայն 2020-ի սեպտեմբերին սկսվեց սարսափելի պատերազմը, որի արդյունքում հերոսացած տղաներից շատ-շատերի նման, ցավով, կորցրինք մեր լավ ընկերոջը՝ Էրիկին: Պատերազմի ժամանակ Էրիկը խիզախաբար գնում էր այն բոլոր ուղղություններով, ուր որ պետք է գնար եւ որպես վարորդ բարեխիղճորեն կատարում բոլոր հրամաններն ու հրահանգները: Նա առանձնանում էր բարձր մարտական ոգով, անվախ մղվում էր թեժ կետեր: Ընկերասեր էր ու հոգատար իր շրջապատի հանդեպ: Ընկերոջ համար չէր խնայի կյանքը: Շատ դեպքերում ինքն էր խորհուրդ տալիս իրենից փոքրերին, որ պատերազմը կհան չէ, պետք է սթափ լինել ու զգույշ մնալ: Չարաբաստիկ Նոյեմբերի 5-ը ճակատագրական հարված հասցրեց մեզ՝ ինչպես մարտական գործողությունների, այնպես էլ մեզ համար թանկ մարդկանց կորստի առումով:

Նոյեմբերի 4-5-ը Շուշիի մատույցներում ընթացած թեժ մարտերին Էրիկը մասնակցել է հերոսաբար: Նոյեմբերի 5-ի երեկոյան Շուշիի ներքեւի խաչմերուկի «Գազալցակայան» կոչվող տեղամասում վարորդ Էրիկն իր հետ միասին հինգ հոգի անձնակազմ տեղափոխելիս ենթարկվում է թշնամու կողմից դիվերսիոն խմբի հարձակման եւ գնդակահարվում անձնակազմի հետ: Գույժը մեզ հայտնի դարձավ մի քանի օր հետո... Էրիկի ընկերասեր, բարի, ուժեղ ու համարձակ կերպարը միշտ մնալու է մեր սրտերում»:

Անդամալի կորստի վշտով ու ցավով է մեզ հետ կիսվում Էրիկի սիրելին, նրա կյանքի հավատարիմ ընկերուհին՝ Աննա Ասկարյանը, որի հետ պետք է ամուսնանար: Մահաբեր պատերազմը խլեց Աննայի սիրած էակին: Նրանց ճակատագրական բաժանման երկրորդ տարեկիցն է, բայց Աննան չի դադարում սիրել նրան: Արցունքների ու լալահառաչի մեջ Աննան յուրահատուկ ջերմությամբ, սիրով ու հպարտությամբ է արտահայտվում իր անմա-

հացած հերոս սիրելի մասին: Խեղդող դառնաթափած կարոտով Աննան առանձնացնում է Էրիկի հետ կապված լավագույն հիշողությունները. «Մի բակի բնակիչներ էինք ես ու Էրիկը, հաճախ էինք բակի մյուս երիտասարդների հետ խմբով հանդիպում, զրուցում, շփվում: Չէի նկատում, որ ընկերությունից ավելի զգացմունքներ ունի իմ հանդեպ: Մի օր անսպասելի հայտնեց, որ ուզում է ավելի մտերմանալ: Հավանում էի նրան, սկսեցիք շփվել, շատ հարգում էի, զգում էի փոխադարձ հարգանք եւ սեր նրա կողմից: Ձորակոչվեց բանակ, սպասում էի նրան: Հաճախակի գալիս էր տեսակցության, մենք էինք զնուն ու հանդիպում նրան ծառայության ընթացքում: Ընտանիքներով ծանոթ էինք, եկել էին մեր տուն խոսելու... Շուրջ վեց տարի շփվել ենք իրար հետ, այդ ընթացքում լուրջ վիճաբանություն անգամ չենք ունեցել: Էրիկն իդեալական տղա էր, հասկացող, հավասարակշռված, մեծին հարգող: Եթե նույնիսկ որեւէ հարցով չէինք հասկանում իրար, նա կընտանք իրար, միշտ ծգտում, որ փոխըմբռնում լինի մեր միջև: Երբ սկսվեց պատերազմը, ես մնում էի մեր տան նկուղային հարկում, իսկ նա կապվում էր ինձ հետ ամեն հնարավոր դեպքում: Մի քանի օր շարունակվող պատերազմն արդեն շատ էր թեժացել, Ստեփանակերտը շարունակում էր հրետակոծվել, ավերածություններն ահագնացել էին: Ձանգեց ու ասաց, որ դուրս գանք: Չէի ուզում, բայց ստիպված էինք: Գնացինք Հայաստան, իսկ սրտունս վատ զգացողություն ունեի:

Երբ կապվում էր հետս, ասում էր, որ ամեն ինչ լավ է ու լավ է լինելու, բայց քնից գրկվել էի, իսկ երբ կարողանում էի մի քիչ քնել, վատ երազ էի տեսնում, լացում էի: Կողքից ասում էին, որ չլացեմ, լավ նշան չէ, բայց չէի կարողանում: Կցվել էի բարեգործական աշխատանքի, սնունդ ու անհրաժեշտ պարագաներ էի ուղարկում Արցախ՝ մտածելով, որ ուն էլ հասնի, լավ է, թող Աստված տեսնի եւ ինչ-որ կերպ հատուցի, որ իմ հարազատներին էլ մեկ ուրիշը օգնի միգրացի: Ավաղ, չստացվեց, կորցրի այն, ինչով հպարտ էի: Նոյեմբերի 4-5-ը լուրեր չկային, չէր ստացվում կապվել, տարբեր աղբյուրներից իմանում էինք, թե իբր լավ են տղաները, բայց չէի հավատում, որովհետեւ չէր կարող, որ նա լավ լիներ, բայց ինձ հետ որեւէ ձեռով չկապվեր: Մի քանի օր մղձավանջից հետո զանգեց ընկերն ու ասաց. «Հավաքիր քեզ...»: Բոլորին չի տրվում այդպիսի հնարավորություն, որ ամբողջ ազգի պիտանի լինես: Էրիկն այն տղաներից էր, որ ազգին ու հայրենիքին օգտակար լինելու հնարավորությունը բաց չէր թողնի, չէր նահանջի, կյանքը չէր խնայի: Նա իմ սրտում հավերժ մնացել է որպես իդեալական տղա, սիրելի անձնավորություն եւ օրինակելի զինվոր»:

Շարքային Էրիկ Արայի Եղյանը հուղարկավորված է Ստեփանակերտի գերեզմանատանը: Իր անձնվեր պահվածքով ու հայրենիքի պաշտպանությանը ցուցաբերած արիությանը Էրիկը շատ հայորդիների նման հավերժացավ պատմության գրկում: Նրա հիշատակն ընդմիշտ վառ կմնա մեր սրտերում:

Փառք ու պատիվ մեր հերոսներին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ



րելին, նրա կյանքի հավատարիմ ընկերուհին՝ Աննա Ասկարյանը, որի հետ պետք է ամուսնանար: Մահաբեր պատերազմը խլեց Աննայի սիրած էակին: Նրանց ճակատագրական բաժանման երկրորդ տարեկիցն է, բայց Աննան չի դադարում սիրել նրան: Արցունքների ու լալահառաչի մեջ Աննան յուրահատուկ ջերմությամբ, սիրով ու հպարտությամբ է արտահայտվում իր անմա-

հացած հերոս սիրելի մասին, իսկ նա կապվում էր ինձ հետ ամեն հնարավոր դեպքում: Մի քանի օր շարունակվող պատերազմն արդեն շատ էր թեժացել, Ստեփանակերտը շարունակում էր հրետակոծվել, ավերածություններն ահագնացել էին: Ձանգեց ու ասաց, որ դուրս գանք: Չէի ուզում, բայց ստիպված էինք: Գնացինք Հայաստան, իսկ սրտունս վատ զգացողություն ունեի:

ՍԱՐԶԻՉ



Անդրեյ Պետրոսյան, ավանդական կարատե-դոյի մարզիչ, սեւ գոտի 3-րդ դաս

Սարգիկի հաջողությունն առավելապես պայմանավորված է մարզչի կողմից ցուցաբերվող մոտեցմամբ: Գիտելիքների, հմտությունների ու կարողությունների մակարդակը, բարձր հեղինակությունը, իր մարզածելի հանդեպ սերը եւ մարզիկի մեջ հաստատականությունն դաստիարակելու կարողությունը լավ մարզչի հիմնական գծերն են:

Սանկվարժ-մարզիչը պետք է պահանջկոտ եւ սկզբունքային լինի առաջին հերթին ինքն իր հանդեպ, ինքնաբերականաբար վերաբերվի իր աշխատանքին: Նա պետք է նորարար

լինի, կարողանա տեսնել արդիական մեթոդիկայի ու տակտիկայի մեջ: Միայն այդ դեպքում նա կվայելի իր սաների վստահությունը: Մարզչի մարզական վարպետության բարձրացման համար պայքարը պետք է համադրված լինի մարզիկների առօրյա աշխատանքային կամ ուսումնական գործունեության եւ հասարակական աշխատանքներին նրանց ակտիվ մասնակցության հետ:

Սարգիչը պետք է միշտ աջակցի իր սաներին, հատկապես նրցաշարերի անցկացման ժամանակ: Հենց նրցաշարերի ժամանակ է մարզիկը զգում մեծագույն անհանգստություն, քանի որ նա զգում է պատասխանատվություն իր մարզչի եւ թիմի առջև, ինչպես նաեւ վախենում է իրեն լավ չցուցաբերել հանդիսատեսի առջև:

Սարգիչը պետք է ոչ միայն նոր հմտություններ սովորեցնի իր սաներին, ցույց տա լավագույն տակտիկան, այլեւ պետք է դաս-

տիարակի մարզիկի բարոյական ոգին: Մարզիչը պետք է ներդնի իր ողջ կարողությունը, հմտությունները, հոգին ու սերը իր սաների մեջ, դրանով ոչ միայն նրանց սովորեցնելով ինչ-որ նոր բան, այլեւ դարձնելով ավելի լա-



Սայաթ Բաղդասարյան. Արցախի վինգչուն-բունդոյի ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ

վը: Մարզիչը պետք է միշտ հիշի, որ մարզիկի բարոյա-կամային հատկությունների ձեւավորման հիմքում մեր հասարակության բարոյական սկզբունքներն են: Այդ սկզբունքին չհետեւելը կարող է հասցնել երիտասարդության մեջ բնավորության բացասական գծերի ձեւավորմանը, ինչպի-



Նարեկ Աբրամյան՝ բոնցբամարտի Արցախի վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ սիք եւ անհատականացումը, եսասիրությունը, մեծամտությունը, կոլեկտիվի հանդեպ արհամարհանքը եւ այլն:

Մարզչին մեծ վստահություն է տրված. նա երիտասարդություն է դաստիարակում: Իսկ որպեսզի դաստիարակես, ինքը պետք է բարձրաժժեք մարդ լինես: Իսկական մարզիչ լինել՝ նշանակում է ինքը քո հանդեպ դնել մեծ պահանջներ, ունենալ բարոյական բարձր արժեքներ, անընդհատ աշխատել զա-



Արթուր Նահապետյան՝ Արցախի ծանրամարտի ասոցիացիայի գլխավոր մարզիչ

ՄԵՐ ՄԱՐԶԻՉՆԵՐԸ



Արմեն Ղահրամանյան. քիբ-բոքսինգի մարզիչ

ղափարա-քաղաքական եւ քաղաքակրթության մակարդակի բարձրացման վրա, ընդլայնել ընդհանուր եւ հատուկ գիտելիքները:

Մարզական ձեռքբերումները մեծ ջանքեր են պահանջում, ինչը մարզչին պարտավորեցնում է անընդհատ հարստացնել իր գիտելիքները: Մարզիչը պետք է տիրապետի ոչ



Ալեքսան Աղաբալյան. Արցախի մուայթայի ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ

կուլեկտիվի մարզական պատիվն ու մարզական փառքը:

Մարզիկի կյանքում մարզչի դերը անհնար է գերազանահատել: Մարզիչը ձեռավորում է

Իվան Ազիզբեկյան. Չյուդոյի վաստակավոր մարզիչ

միայն իր մարզական մասնագիտության ուսուցման եւ մարզելու մեթոդիկային, այլեւ լավ իմանա ֆիզիոլոգիա, մանկավարժություն, հոգեբանություն: Դրա հետ մեկտեղ մարզչի ուսերի վրա մեծ գործ է դրված՝ մարզիկների դաստիարակությունը: Այս հարցում մարզիչը պետք է ապավինի հասարակական ակտիվին եւ իր համար օգնականներ ձեռավորի ակտիվից:

Մարզիկների դաստիարակության հար-



Արթուր Առուշանյան. կիոկուշինկայ կարատե-դոյի մարզիչ

ցում մեծ դեր ունեն ավանդույթները: Մարզական նվաճումների հասնելու առաջատար ավանդույթներն օգնում են նոր մարդ դաստիարակելուն, որն ազատ է, գիտակցող, կարգապահ, ժամանակակից հասարակության նախաձեռնող անդամ: Այդ ավանդույթները կապում ու միավորում են մարզիկներին, ոգեւորում նրանց նոր նվաճումների համար:

Ավանդույթների նշանակությունը մարզիկների դաստիարակության հարցում իսկապես մեծ է: Յուրաքանչյուր մարզիկ պետք է իմանա իր մարզածեւի պատմությունը, հարգի ու պահի իր ֆիզիկական կուլտուրայի



Ալեքսան Աղաբալյան. Արցախի մուայթայի ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ

կուլեկտիվի մարզական պատիվն ու մարզական փառքը:

Մարզիկի կյանքում մարզչի դերը անհնար է գերազանահատել: Մարզիչը ձեռավորում է



Էռնեստ Միրզոյան. Սամբոյի Արցախի եւ Հայաստանի վաստակավոր մարզիչ

մարզիկի անձը, տարբեր բնավորություն եւ խառնվածք ունեցող մարդկանց միավորում է մեկ ընդհանուր շուրջ, ինչպես ասվում է հայտնի համեմատության մեջ, անձեւ գնդից պատրաստում է հրաշալի քանդակ:



Արմեն Պետրոսյան. կիոկուշին կարատե-դոյի մարզիչ, սեւ գոտի 1-ին դաս

Տարբեր մարզածեւերի զարգացումն ու մասսայականացումը մարտավարական նշանակություն ունեն Արցախի համար: Բացի




Տիգրան Գեւորգյան. Ավանդական կարատե-դոյի մարզիչ, սեւ գոտի 3-րդ դաս

նրանից, որ սպորտի միջոցով դաստիարակվում է կոփված, առողջ, ֆիզիկական եւ հոգեբանական բարձր կարողությունների տեր սե-



Ժիրայր Պետրոսյան, Ջեյ Քեյ Էս(JKS) ճապոնական շոտո կարատե-դո հայկական ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ, սեւ գոտի 2-րդ դաս

րունդ, մեր մարզիկների կողմից նաեւ Արցախն է ներկայացվում միջազգային մրցահարթակներում նրանց մարզական բացառիկ նվաճումների շնորհիվ: Այդ նվաճումների հիմքում մարզական ծանր ու քրտնաջան աշխատանքն է: Մարզիչների կատարած բարդ ու



Ռաֆայել Հայրապետյան. Արցախի այկիդո-այ-կիկայ ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ, սեւ գոտի 1-ին դաս

ազգանվեր գործն արժանի է շնորհակալանքի եւ միշտ էլ բարձր է գնահատվել ու գնահատվում է Արցախի կառավարության կողմից:

(Ֆոտոշարքը լինելու է շարունակական: Մարզական էջում պարբերաբար ներկայացվելու են Արցախի մարզիչները, ինչպես նաեւ նրանց հետ ունեցած մեր հետաքրքիր հարցազրույցները):

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՂԵՏԱԲԵՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՊՈՐՏԻ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպորտային մեջբերումներ
Չեմպիոն դառնալու համար պետք է կարողանալ պարտվել:

Հաղթում է ոչ թե նա, ով ավելի ուժեղ է, այլ նա, ով պատրաստ է գնալ մինչև վերջ:

Չեմպիոն դառնալը շատ ավելի հեշտ է, քան պահպանել այս տիտղոսը և ապրել դրանով ողջ կյանքում:

Մարտարվեստը միշտ սկսվում է ավարտվում է քաղաքավարությամբ:

Եթե դուք գտնվում եք տուգանային հրապարակում և չգիտեք, թե ինչ անել գնդակի հետ, պարզապես գոլ խփեք, իսկ խաղից հետո մենք կհասկանանք, թե ինչ կարելի էր անել դրա հետ:

Բոր Փեյսլի

Նույն ֆուտբոլիստը պետք է միաժամանակ տեսնի գնդակը, իր 10 գործընկերներին, հակառակորդներին և շիկահերին կամ թխահերին յոթերորդ շարքում՝ անբիռնում:

Իսպանիան խաղում է գեղեցկության շեշտադրմամբ, Իտալիան՝ կրքի, Գերմանիան՝ արդյունքի, Հոլանդիան՝ երկրաչափության վրա, և միայն Անգլիայի առաջնությունն է խառնում այդ ամենը:

Ֆիզիկական վարժությունները կարող են փոխարինել բազմաթիվ դեղամիջոցների, բայց աշխարհում ոչ մի դեղամիջոց չի կարող փոխարինել ֆիզիկական վարժությունների:

Ալֆրեդ Մուսեթ

Մարմնամարզությունը, ֆիզիկական վարժությունները, քայլերը պետք է ամուր հաստատվեն յուրաքանչյուրի առօրյա կյանքում, ով ցանկանում է պահպանել արդյունավետությունը, առողջությունը, լիարժեք և ուրախ կյանք:

Հիպոկրատ

Բասկետբոլի դաշտն այն վայրն է, որտեղ ես կարող եմ մոռանալ իմ բոլոր խնդիրների մասին:

Բարոն Ղևիս

Դեղերի ցանկը, որոնք չկան դեղատանը

1. Մարզվելը դեղ է:
2. Աղոթքը դեղ է:
3. Հավասարակշռված դիետան բուժում է:
4. Ծիծաղը դեղ է:
5. Դրական վերաբերմունքը բուժումն է:
6. Քունը դեղ է:
7. Մեղիտացիան դեղ է:
8. Սերը դեղ է:
9. Սիրված լինելը դեղ է:
10. Երախտագիտությունը դեղ է:
11. Կողովմունքից, թշնամանքից ու բարկությունից հրաժարվելը դեղ է:
12. Ընթերցանությունը և հոգին սնուցելը բժշկություն է:
13. Սիրելիների հետ զրուցելը բուժում է:
14. Գրկախառնությունները դեղ են:
15. Դրական մտածողությունը և ճիշտ մտածողությունը դեղամիջոցներ են:
16. Էքսկուրսիաներն ու զբոսանքները բնության գրկում դեղ են:
17. Լավ ընկերները դեղ են:
18. Ինքնեդր ձեզ և ուրիշներին ներելը բուժումն է:
19. Երգն ու պարը դեղ են:
- Առողջություն բուրբին:

ՖԲ-ից

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՇԱՐԱԹ

ԿՅԱՆԵՐ ԲԻՄԻԱ Է

Լուսն են, մոռանում են,
Տեսնում են, հիշում են,
Կատարում են, հասկանում են...
Չինական

Մեզ շրջապատող ամեն ինչ նյութական է: Նյութը և նրա բոլոր տեսակի փոփոխությունները ուսումնասիրող գիտությունը քիմիան է: Մարդիկ չեն կարող գոյատևել առանց այդ գիտության մշակների կողմից ստեղծված նյութերի (դեղեր, պարարտանյութեր, լվացող ու մաքրող հեղուկներ և այլն): Քիմիայի իմացությունը սկսվում է փորձից: Փորձը պետք է դառնա գիտելիքի հիմնական աղբյուրը:

Այս հանգամանքը հաշվի առնելու փաստացի դրսևորումն էր Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան դպրոցում կազմակերպված «Քիմիայի շաբաթ»-ը, որը հաջորդել էր կրտսեր դպրոցականների շրջանում կազմակերպված «Մաթեմատիկայի շաբաթ»-ին: Միջոցառում, որ համեմատելի առարկաների բազմազանությամբ, առեղծվածային հարցերով, սուր դատողություններով ու տրամաբանությամբ, կյանքի ու բարոյականության դասերով, մարդկային հետաքրքիր հարաբերություններով, հումորով ու երգիծանքով, հայրենասիրական գաղափարներով ու հաճելի անակնկալներով:

Միջոցառումը նախաձեռնել էին դպրոցի ուսնավար Մելանյա Սարգսյանը, որը բոլոր օրերին վարում էր մրցույթը և քիմիայի ուսուցչուհի Անահիտ Ավանեսյանը, որն իր լաբորատորիայում իրականացնում էր բոլոր օրերի փորձերը և ստուգում երեխաների կատարածի ճշգրտությունը: Նրանց օգնում էին արտադասարանական աշխատանքների կազմակերպիչ Մերի Գաբրիելյանը և օպերատոր Կարինե Մկրտումյանը:

Մրցութային առաջին օրը ժյուրիի անդամներ ընտրվեցին դպրոցի ուսուցիչներից՝ տնօրեն Սարելա Ավանեսյանի նախագահությամբ: Այդ օրը մրցում էին 7ա և 7բ դասարանները: Եվ քանի որ նրանք մեր են սկսել առարկայի ուսուցումը, որոշ հարցերում պահվություն էին ցուցաբերում կամ շփոթում նյութերը, որ պետք է տեղադրեին օբյեկտներ, թթուներ, հիմքեր և աղեր անվանումներով ամանների մեջ:

Շատ հետաքրքիր հարցեր էին նախատեսված մրցույթի համար՝ համեմատել քիմիայի վերաբերյալ հանելուկներով: ա/ Գուշակել քիմիական նյութերի բանաձևը. բ/ Առօրյայում և կենցաղում մեզ հաճախ հանդիպող այս նյութերը ինչպե՞ս ենք անվանում (NaCl, NaHCO3, CH3COOH, C12H22O11, CaCO3...): գ/ Գուշակել նյութի անունը (KMnO4, Li2SO4...): դ/ Եղած շիլաշփոթից վերականգնել քիմիական սահմանումը: Մասնակցում էին դասարանի բոլոր աշակերտներն անխտիր:

Այնուհետև բոլորի ուշադրությունը հրավիրվում է լաբորատորիայի վրա, որտեղ ուսուցչուհի Ա.Ավանեսյանը պիտի ստանա փարավոնի առեղծվածային օձերը՝ չոր սպիրտների վրա տեղադրելով մեկական կալցիումի գլյուկոնատ: Վառում է սպիրտները, փորձը հաջողվում է, և երեխաները հետաքրքրությամբ են դիտում այն: Դետո իրենք են փորձեր կատարում լաբորատորիայի վարիչի հրահանգով՝ ստանալով համասեռ լուծույթներ (աշխատում են զույգերով՝ լաբորանտը և օգնականը):

Պարբերական աղյուսակի իմացությունը պարտադիր է բոլորի համար, որպեսզի կարողանային գուշակել ու գրել ոչ միայն քիմիական տարրի անունը, այլև քիմիական տարրի հարաբերական զանգվածը: Սովորողները հպարտությամբ նշեցին նաև պարբերական աղյուսակում իր տեղը զբաղեցրած հայազգի Յուրի Յուլակի Դովհաննիսյանի հայտնագործած Օգ (Օգանեսոն) տարրը:

Լաբորատորիայում ընդմիջումներով շարունակվում էր հրաշքերի արարումը. ջրից՝ գինի, գինուց՝ ջուր, ինչո՞ւ թաշկինակը չվառվեց և այլն: Քիմիայի իմացությունը սկսվում է փորձից. փորձը ինչ-որ երևույթի գիտական վերարտադրությունն է:

Հայտնի թևավոր խոսք կա. «Սագերը փրկել են Դոնը», ու հաջորդում է հաղորդավարի հարցը. «Իսկ ո՞ր մետաղն է կործանել Դոնը»: Պարզվում է, որ դա կապարն է:

Մրցութային առաջին օրը հաղթեց 7ա դասարանը:

Երկրորդ օրը հանդես եկան 8ա, 8բ և 8գ դասարանների աշակերտները, որոնք ավելի կանոնավոր ու ավելի ակտիվ էին աշխատում. կար քիմային աշխատանք, փոխըմբռ-



նում, ժամանակի զգացողություն, գեղեցիկ ընկալում, աշխույժ մթնոլորտ: Այս ամենը նկատվեց ու չլրիպեց տնօրեն Ա.Ավանեսյանի ուշադրությունից. նա շեշտեց, որ գնալով ավելի հետաքրքիր է դառնում քիմիայի շաբաթը և գիտելիքների, և՛ ակտիվության առումով: Օրվա հաղթողը դարձավ 8գ դասարանը:

Երրորդ օրը դպրոցում նշանավորվեց մի



այլ իրողությամբ ևա: ԿԳՄՍ նախարարության կողմից տեսչական ստուգումներ էին իրականացվում: Այդ փաստը, սակայն, չխանգարեց մրցույթի ընթացքին: Ավելին, նրանցից մի քանիսը ևս մասնակից դարձան միջոցառմանը և մեծ բավականություն ստացած՝ դուրս եկան դահլիճից: Այդ օրը հաղթեց 9ա-ն:

Զորրորդ օրը մրցասպարեզ դուրս եկան բոլոր քիմերը՝ իրենց տնային աշխատանքներով, որ ներկայացրել էին ցուցապատառների վրա, և ակրոստիքներով: Օրը ճակատագրական էր...

Մուտքի խոսքում փոխտնօրեն Մ. Սարգսյանը շեշտեց, որ բնագիտական առարկաների ուսուցման հարցերով մտահոգ իրենց ուսուցիչների խնդրանքով ու մեթոդավորումների աջակցությամբ են կազմակերպվում ու անցկացվում առարկայական շաբաթները: Ուսուցման խաղային, մրցութային մեթոդները, հետաքրքրաշարժ փորձերը, անշուշտ, նպաստելու են բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրությունների առաջացմանը: Եվ քանի որ քիմիան փորձարարական գիտություն է, ուրեմն պետք է լավ ճանաչել նյու-

թերը, իմանալ դրանց հատկությունները, փորձերի օգնությամբ թափանցել նյութերի զարմանահորաշ աշխարհը:

Այնուհետև բոլոր քիմերը ներկայացրին իրենց պատրաստած տնային աշխատանքները, ակրոստիքները, կռահեցին լուցկու հատիկի բոցի երեք գոտիները, ազոտական թթվի «ծնունդը», ծանաչեցին էկրանին հայտնված քիմիկոսներին, պատասխանեցին Մենդելեևի կյանքին ու գործունեությանը, նրա հետաքրքրություններին, հայտնագործություններին վերաբերող հարցերին: Թերևս ամենահետաքրքիրն այն էր, թե ինչպես է նա հայտնագործել պարբերական աղյուսակը՝ 30 տարվա քրտնաջան աշխատանքի արդյունքը: Պարզվում է՝ երազում, ինչն էլ հաստատում էր ինքը՝ Մենդելեևը: Նա նաև մայրապաշտ էր, որի վառ ապացույցը իր ամենակարևոր աշխատության («Օրգանական քիմիա»)՝ մորը նվիրելու փաստն է:

Այսպես ավարտին էր մոտենում հրաշալի միջոցառումը՝ հրաշալի անակնկալներով: Մ.Սարգսյանը սահուն անցում է կատարում քիմիայից դեպի հայրենիք ու պատգամում՝ հայրենիքից դուրս երջանկություն չկա, խոր արմատներ ձգեք միմիայն սեփական հողում: Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:

Դահլիճում հայտնվում է Մասիսների մոդելը, և քիմիայի ուսուցչուհի Ա.Ավանեսյանը գործի է անցնում...

Ա՛խ, այս Մասիսը... Որից փափկում են սրտերը բոլորը, երբ ինքը... քար է, Որ ջերմացնում է սրտերը մուրը, երբ ինքը սառն է, Որ աշխարհներից հեռավոր-հեռու Բոլոր հայերին այստեղ է բերում, երբ ինքն (այստեղ չէ) լուռ է... Մեր աչքի առջև ուսուցչուհին հրաշքներ է գործում. Մասիսներից մեկի զագաթից «լավա» է ժայթքում, մյուսից՝ «հրաբուխ» հատուկ նյութերի օգտագործմամբ: Եվ հնչում է Մ. Սարգսյանի հայրենասիրական հնչել ծայրը. «Տարիներ առաջ երջանիկ հայությունը կրազած լեռան շուրջը շուրջպար բռնեց՝ ի նշան միասնության ու համախմբման: Տա Աստված, որ այսուհետ հայությունն այնպես միավորվի, որ Արարատի շուրջը շուրջպար բռնի, ու նրանց ոտնաձայներից թնդա աշխարհը... Իսկ մեր հավերժության խորհրդանիշ Մասիսն էլ թող այնպես ժայթքի, որ իր շուրջը եղած վաչկատուն գեղերն անհետանան, ու մեր սուրբ լեռը տեսնենք հակառակ

րով: Ամեն առարկայի մեջ էլ կա գիտականություն, մի քիչ գրականություն, մի քիչ աշխարհագրություն, մի քիչ պատմություն ու կյանք: Ձինվենք գիտելիքներով, որ կերտենք Արցախի ապագան, համախմբվենք մեր լեռների պես՝ ուս ուսի, որ ավելի ամրանանք ու զորանանք և զորացնենք մեր աշխարհը: Այսօր՝ մեր այս հետաքրքիր միջոցառման եզրափակիչ օրը, նշանավորվեց մի շատ կարևոր իրադարձությամբ. մեր սիրելի ուսուցչուհին հատուն տարիքում խիզախել է մայրանալ ու իր այդ հայրենասիրական քայլով երջանկություն պարզել բոլորիս: Վաղ առավոտյան ծնվել է մեր Լուսինեի հրաշք դուստրը՝ Ադանն: Խաղաղ ու երջանիկ մանկություն մաղթենք փոքրիկին և նրա այս ավարտենք ազգային խորխտ երգով... Այսպես է ապրելու Արցախը՝ չարի դեմ պայքարելով, մահվան դեմ՝ օրորոց պարզելով:

Հինգերորդ օրը ամփոփվեցին արդյունքները, ու որոշվեցին մրցանակային տեղեր զբաղեցրած քիմերը. առաջին մրցանակային տեղը զբաղեցրեց 9ա-ն և պարզատարվեց ժամացույցով, երկրորդ և երրորդ տեղերը՝ համապատասխանաբար 7ա-ն և 9բ-ն՝ պարզատարվելով ծաղկամաններով:



կողմից: Ավարտին մոտեցավ ևս մի կարևոր միջոցառում, որը, համոզված են, սովորողների մոտ հետաքրքրություն առաջացրեց իր հանելուկային ու առեղծվածային դրսևորումներով:

Ամեն առարկայի մեջ էլ կա գիտականություն, մի քիչ գրականություն, մի քիչ աշխարհագրություն, մի քիչ պատմություն ու կյանք: Ձինվենք գիտելիքներով, որ կերտենք Արցախի ապագան, համախմբվենք մեր լեռների պես՝ ուս ուսի, որ ավելի ամրանանք ու զորանանք և զորացնենք մեր աշխարհը: Այսօր՝ մեր այս հետաքրքիր միջոցառման եզրափակիչ օրը, նշանավորվեց մի շատ կարևոր իրադարձությամբ. մեր սիրելի ուսուցչուհին հատուն տարիքում խիզախել է մայրանալ ու իր այդ հայրենասիրական քայլով երջանկություն պարզել բոլորիս: Վաղ առավոտյան ծնվել է մեր Լուսինեի հրաշք դուստրը՝ Ադանն: Խաղաղ ու երջանիկ մանկություն մաղթենք փոքրիկին և նրա այս ավարտենք ազգային խորխտ երգով... Այսպես է ապրելու Արցախը՝ չարի դեմ պայքարելով, մահվան դեմ՝ օրորոց պարզելով:

Հինգերորդ օրը ամփոփվեցին արդյունքները, ու որոշվեցին մրցանակային տեղեր զբաղեցրած քիմերը. առաջին մրցանակային տեղը զբաղեցրեց 9ա-ն և պարզատարվեց ժամացույցով, երկրորդ և երրորդ տեղերը՝ համապատասխանաբար 7ա-ն և 9բ-ն՝ պարզատարվելով ծաղկամաններով:



Բոլորս հիացած էին միջոցառման կազմակերպիչների ներդրած ջանքերով: Առարկան պետք է այսպես գրավիչ դարձնել սովորողների համար: Դպրոցը, որ Մ. Սարգսյանի նման ուսումնական գործընթացը վերահսկող մասնագետ ունի, անկասկած կարծանագրի հաջողություններ: Այսպիսի դպրոցում ուսուցիչը չի կարող ծուլանալ ու աչք փակել մասնագիտական թերությունների հանդեպ: Թող նման նվիրյալ անհատները անպակաս լինեն Արցախի դպրոցներից:

Վերջին օրը միջոցառումը ամփոփեց տնօրեն Մ.Ավանեսյանը.

Սիրելի դպրոցականներ, համոզված են, որ այս մի շաբաթվա ընթացքում դուք ձեռք բերեցիք որոշակի գիտելիքներ ու միաժամանակ հետաքրքրվեցիք՝ ձեզ հարցերի պատասխանները գտնելու համար: Ընդհակառակը հայտնենք ընկ. Մ.Սարգսյանին և առարկայի ուսուցիչ Ա.Ավանեսյանին՝ այս հրաշալի միջոցառումը նախաձեռնելու և կազմակերպելու համար: Ընդհակառակը նաև կազմակերպիչ Մ.Գաբրիելյանին և օպերատոր Կ.Մկրտումյանին՝ միջոցառման օժանդակելու և օգնելու համար: Ընդհակառակը նաև Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանին՝ քիմիական նյութերը տրամադրելու համար: Հավատացած են, որ հաջորդ մրցույթների ժամանակ դուք ավելի բարձր ցուցանիշներ կարձանագրեք: Միջոցառման ավարտական փուլի հայրենասիրական բովանդակությամբ վերջաբան էլ ևս մեկ անգամ վերահաստատեց, որ մենք սիրում ու պաշտում ենք Արցախը և ամեն ինչ կանենք՝ նրա շենացմանը նպաստելու համար: Խաղաղ երկինք, ամուր կամք ու հաջողություն են մաղթում բոլորիս:

ՀԱՅՈՑ ԱՅՐՈՒԲԵՆԸ

ԵՎ ԱՄԵՆ ՄԻ ՏԱՌ՝ ԱՐԵՓԱԿՆ ԱՐԴԱՐ...

Կամո ԲԱԼԱՅԱՆ

Հայոց այբուբեն, հայոց սրբարան,
Եվ ամեն տառ՝ Աստվածային դուռ,
Լույսի խորան է, երկնամերձ մատուռ,
Արեգակն արդար, պայծառ, մշտահուր...

Եվ ամեն տառ՝ ավետաբեր լուր,
Կայծակնացայտ թուր երկնամերձ լեռան,
Հրաշք կաթնաղբյուր,
Ընկածը մի բուռ, ծնվածը լրգրի,
Դյուցազուն մի ծուռ, զորեղ, անրակուռ...

Եվ ամեն մի տառ՝ կանչ աշխարհասփ-
յուն,
Երբ մութ է ճամփան և մահասարսուռ,
Տպագիրներին՝ լույս արարչական,
Եվ աղբյուրի գուռ և շանթ է ու հուր...
Եվ ամեն տառ՝ գուռ է մի մատյան,
Սուր է և պատյան, դար է ու ատյան,
Սահման ու վահան,
Չարին դիմադարձ, ահեղ դատաստան,
Եվ բացվող դուռն է հայրենական տան...

Եվ ամեն մի տառ՝ սրբազան մի տաշտ,
Բարեբեր հերկ է, ցորնածուփ մի դաշտ,
Ավետիս, օրհնանք, երկունք, լուսաբաց,
Ծես ու պատարագ, հանապազօր հաց...

Հայոց այբուբեն և արմատ և ծառ,
Ճշմարիտ, արդար, ոգու բերք ու բար,
Եվ արարչական երեսունվեց տառ,
Խշշում են դալար՝ հանց Սոսյաց ան-
տառ,
Խորին պաշտամունք, Աստօն խնկա-
ծառ...

Ժամանակների միշտ կորստաբեր,
Արյուն ու ավեր,
Եվ հողմակործան, նենգադավ, ահեղ,
Եվ Մեծն Մաշտոց, երեսունվեց տառ,
Տառն հաղթողը, արքան փառաշեղ,
Միշտ խաղաղարար և ազատարար,
Փրկության դռներ հզոր ու շքեղ...

Եվ ամեն տառ՝ և ամեն բառ
Հին Արևելքի երկինքների տակ,
Որ Սամոսատն է,
Եղեսիան հայոց,

Մրրիկ ու ավազ և շեկ անապատ,
Գետեր ափեպի, Տիգրիս ու Եփրատ,
Անխոնջ եռանդից, ջանք ու տքնանքից,
Միտք ու սլացքից, սխարանք-ճախարանքից
Հասկակալեցին որպես ոգու հաց,
Մեծն Վարդապետ հանճարից Մաշտոց,
Լույսի խրճերը, տառերը հայոց...

Ջահակիրները հարատևության,
Գանձ ու գանձարան,
Մտքի կրթարան, ազնիվ շտեմարան,
մատենադարան,
Սուրբ հիշողություն, մեր երթը անմար,
Այբուբենը մեր՝ երեսունվեց տառ...

Եվ ամեն մի տառ անհուններն ի վեր
Դեռ պիտի բոցվի,

Եվ ամեն տառ՝ մարմինը հատված,
Գագանն է պատճառ, պիտի հատուցվի,
Եվ ամեն տառ՝ ծովը ցամաքած,
Դեռ պիտի լցվի,
Եվ ամեն տառ՝ դուռն ճախաստեղծ,
Քեզ վրա գոցված, դեռ պիտի բացվի...
Եվ ամեն մի տառ մի նոր խորան է,
Մի նոր սրբարան, որ պիտի օծվի,
Եվ ամեն մի տառ շքեղ, իմաստուն,
Ջորավոր երթի՞ր զինվորն է արթուն,
Շանթ է երկնային, որ կալեկոծվի,
Արարչական գարկ, որից գագանը
Անշուշտ, կխոցվի...

Եվ ամեն տառ՝ ամեն մի տողը,
Եվ հնչյուն ու բառ և երգ ու բարբառ,
Ոգու և մտքի, հիմք ու ակունքի,
Ալեկոծության, ալբերախության
Օվկիան է անհուն, բիբլիական հուն,
Հրավառություն, փառաբանություն,
Մոմավառություն, երկրպագություն...

Եվ ամեն տառ՝ մշտադողանց զանգ,
Վե՛մ է ու խոյակ, ծես ու պատարագ,
Ոսկեփայլ գմբեթ և անկործան բերդ,
Պարիսպ փլուզված, բայց աներեր երթ...

Եվ ամեն տառ՝ թուրն է Կեծակի,
Որ չարին ընդդեմ պիտի կայծակի,
Ջրաղացքար է, թե գոմշի կաշի,
Նա պիտի շանթի,
Նա պիտի հատի, նա պիտի ծակի...
Սուրբ զանգակատուն, երկնառաք դո-
ղանց
Հայոց այբուբեն,
Եվ հիշողության արդար զանգահար,
Երբ օտարների կրունկների տակ
Դարձանք մենք կոխան, դարձանք
նոտնատակ,
Հաճախ էլ անտուն, հաճախ ավերակ,
Տառն կամավոր զինվորագրյալ,
Հոգևոր երկրի սահմանապառը
Անհանգիստ, արթուն,
Մայրերն են հայոց, կորուստներ գրկած,
Տառապալ, անքուն,
Մայրեր իմաստուն, մրմունջը վշտի,
Աղերս փրկության, աղոթք առ Առ Աստ-
ված:

Եվ ամեն տառ՝ խաչված Քրիստոսի
Լույսն է մշտավառ,
Եվ ամեն տառ՝ ոգու շինություն,
Եվ նախազարդված սրբատաշ մի քար,
Եվ ծիածանված մի կամուրջ կամար,
Կիսաթաղ ծածկված, ծաղկած մի խաչ-
քար,
Սրբազան մասունք, սրբազան նշխար,
Աստվածային գեներ, զորք ու զորական,
Երկրին գորություն երեսունվեց տառ...
Երբ սուրն է շաչել ճամփեքին գաղթի,
Մեր դեմ գոցվել են դռները բախտի
Եվ խորովել են հրե շողերը
Մեր մարմինները շեկ անապատի,
Օրորոցները, մանչերը թողած չարի երա-
խում,
Կյանքից առավել և ապրելուց թանկ,
Մայրերը հայոց, հարսերը խոնարհ,

Սուկ ձեզ են փրկել ճանկից արնախում...

Հայոց տառերը, լույսի ջահերը
Արևահեղեղ նրանց խրճերը
Ճեղքում են, սրբում, քշում ու տանում
Մառախուղները
Մշուշ ու խավար, սև մրուրները...

Եվ տառն ժայռ է,
Անցյալից պոկված վե՛մ է ու խոյակ,
Որձաքար է այն և կայծակնաքար,
Հիմքն է հիմքերի ամուր կարծրաքար,
Սուր է պահապան, նիզակ սրածայր,
Հայկ նահապետի նետն է եռածայր,
Սլացքն է անշեղ, գանձ է ու հեղեղ,
Գահ արդարամիտ
Եվ գահակալ է, շքեղ, փառաշեղ,
Հինավուրց երկրի՞ր և ազնվացեղ...
Եվ ամեն մի տառ
Լեզուն մեր ճկուն, լեզուն մեր հայոց,
Տեր ու տիրաբար, ջլուտ մի բարբառ,
Արքան քո Առան,
Արքան Վաչագան,
Արդար, շինարար և բարեխնամ,
Չարի հետ անհաշտ,
Սուրբ ու բարեպաշտ:

Լեռ է ու անտառ, Թարթառ ու Կարկառ,
Ամեն մի տառ՝ դարձ է ի հավատ
Վիատված մարմնի, հոգու անհավատ,
Քիրս ու Մռով է, լեռը Դիզափայտ,
Սուրբ Գանձասարն է, գմբեթ է ու խաչ,
Երիցմանկանցը, Հակոբավանքը,
Գոհիչ ու Կավաք,
Հրեշտակներ Տիրոջ և առաքյալների,
Հրաշք Դադիվանք,
Միշտ ճախարանքի մեջ, միշտ համահա-
վաք,
Եվ արևաբույր անհունի նվազ...

Ամեն մի տառ՝ լուծումն է հարցի,
Կշիռ ճշմարիտ, վարձը կորստի,
Ամեն մի տառ՝ բիբլիական լեռ,
Որ ծաղկունքվում է ծյունից էլ ճերմակ,
Մանկանց շուրթերին՝ սուրբ ու անա-
րատ...

Հայոց այբուբեն, ամեն մի տառ
Հացեկաց գյուղից Տարոն գավառի,
Արարչական ծիր մինչև Օշական,
Եվ հայրենյաց դաս, դողանց երկնահաս,
Վաղարշապատից մինչև Ամարաս...
Եվ ամեն տառ՝ ընծան Բարձրյալի,
Կենարար երակ կապույտ երկնքի,
Հույսն ու հավատը, սրտի տրոփը,
Բարեբեր հունդը ակոս ու հերկի,
Ազգ, ժողովրդի շինարար ձեռքի,
Ազնիվ երակը հավերժի երթի
Եվ մշտահուլով մեղեդին երգի,
Թև ու թռիչքը ճախարանք ու հեքի,
Օրհասի պահին դուռը մեր ելքի,
Հրաբուխ ընդերքի, մեր ոգու եռքի,
Հունձքը մեր ոսկի մեր ցորեն հասկի,
Դեղ ու բալասան, խորան աղոթքի
Արյունոտ երկրի, արյունոտ վերքի:

Եվ ամեն տառ՝ ամեն մի բառ,
Ամեն մի տող
Բանն է ԱՍՏՕՈ...

Եվ ամեն տառ՝ ասքեր է հյուսում,
Իմաստուն էպոս Հայոց աշխարհի,
Եվ թարգմանություն Աստվածաշնչյան
Ու տիեզերական,
Տիրոջ Սուրբ գրքի,
Հրաշք մատյանը, ողբերգությունը
Տիեզերահռչակ Սուրբ Նարեկացու,
Պատմություն հայոց Մեծ Խորենացու,
Ազգերի ծովում փոքր, աննշան,
Բայց լայնածավալ, լայնահուն ածու...
Հայոց այբուբեն և Հայոց երկիր
Եվ ջրհեղեղը համաշխարհային,
Լեռը Արարատ,
Եվ Նոյ ու տապան
Երկիր փրկության...
Եվ աղեղնավոր Հայկը նահապետ,
Եվ եռածայր նետ,
Եվ Ասորիքի բռնակալ արքան
Չարկվեց ու գամվեց
Գետնին արնաքամ:

Հայոց սուրբ գրեր,
Սաղմոս ու խաղեր, տաղ ու շարական,
Ծաղկող ու գրիչ, ճարտար, ճարտասան,
Հոգևոր երկիր և եղենական...

Եվ ամեն տառ՝ ամեն մի բառ
Քո հազարամյա ճամփան են հսկում,
Երբ որ կանգնած ես եզրին անդունդի
Երկիր այս գնդի,
Միջուկն է ճեղքում չարիքի, մեղքի,
Բառն ու տառն էլ էլ են մարտի,
Եվ հաղթողները կլինեն նրանք
Այս բախտորոշիչ, նենգ գոյամարտի...

Եվ ամեն տառ՝ պիտի շիկանա,
Պիտի կրակվի,
Պիտի դողանցի, պիտի զրնգա,
Պիտի որոտա,
Բոլոր դավերին Աստօն գորությամբ
Պատասխան կտա...

Աշխարհասփյուռ բոլոր հայերին
Սիրով Արարչի տուն պիտի կանչի...

Մեր Այբուբենը...
Եվ հազարամյա ու Աստվածային
Մեր ազնիվ գեներ,
Մեր Այբ, Բեն, Գիմ-ը
Հավիտենական և հավերժական,
Մերը և իմը...

Հայոց այբուբեն Հայոց տառերը
Հոգուս խորանին լույսեր են սփռել
Հույսի, հավատի
Սուրբ կանթեղները...

ՎԱՆԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ-100

ԸՆԿԵՐ ՕՆԻԿԸ

Հատված «ԱՆԽՈՐԱԳԻՐ» վիպակ-խսեից...

Հյուրանոցի հեռուստացույցի ծայր...
Տեր Աստված, այս ի՞նչ ծանոթ դեմք է, այն, շատ ծանոթ...
Հագարի մեջ, միլիոնի մեջ չեմ շփոթի նրան, որովհետև այդպիսի ինքնատիպ դեմք աշխարհում հազիվ թե լինի:
Ընկեր Օնիկն է:
Դեմքը գունատ է, համարյա՛ դեղին, բայց երբ լնդերը բացվում են, շատ լայն են բացվում, դեմքին գոյանում է կարմիրից ու դեղինից խառնված մի տարօրինակ արհամարհանք ու հեզմանք...
Թեև հեռուստացույցի ծայրը անջատել են, բայց նրա ծայրը լուսն են շատ պարզ ու հստակ:
- Հիմա եկար հասար Ամերիկա ու տեսար, որ ճիշտ էի:
- Ի՞նչն էիր ճիշտ...
- Են, որ աշխարհը միայն հանրահաշիվ է, ֆիզիկա ու քիմիա...
- Ոչ, աշխարհը միայն հանրահաշիվ, ֆիզիկա ու քիմիա չէ...
- Հասա ի՞նչ է...
- Աշխարհը նաեւ Ուիթնեմ է, Ռեմուար է, Լորկա է, Չարենց է, Եսենին է, Բլոկ է...
- Եկել հասել ես Ամերիկա ու մնացել հին խելքիդ...
- Հասա ի՞նչ էիր ուզում, Ամերիկայում խելքս փոխեի՞, պլաստիկ օպերացիա՞ անեի...

- Վատ չէր լինի...
- Ինչո՞ւ...
- Հիշո՞ւմ ես՝ 7-րդ դասարանում քեզ կանչեցի գրատախտակի մոտ, մի խնդիր տվի, ու դու չկարողացար լուծել...
Նախ այդ խնդիրը մենք դեռ չէինք անցել, դու էլ նոր էր եկել մեր դպրոց, լսել էիր, որ բանաստեղծություններ են գրում, ուզեցիր ձեռ առնել... Հետեւիցս էլ քրթմնջացիր՝ բանաստեղծ:
- Ուզում էի, որ այդ դատարկ բաներից ձեռ քաշես...
- Բայց մի շաբաթ հետո, երբ նորից քննիչներով գրատախտակի մոտ կանչեցիր, ստիպված «5» դրիր, չէ՞...
- Ինչո՞ւ ստիպված...
- Որովհետև բոլոր խնդիրները ճիշտ ես արագ լուծեցի:
- Է, էնպիսի խնդիր կարող էի տալ, որ տակից դուրս չգայիր:
- Այդպիսի խնդիր չէիր կարող տալ, որովհետև դասագիրքը տակնուվրա էի արել ու լուծել բոլոր խնդիրները...
- Ես էլ ուրիշ, մի ավելի բարձր դասագրքից կտայի...
- Ահա, հենց այստեղ է պոեզիա սիրողների ու չսիրողների տարբերությունը: Պոեզիա սիրողը սրտով կուրախանար, կհրճվեր, կոգտեր, որ տղան մի շաբաթում նստել ու յուրացրել է դասագիրքը... Իսկ դու անպայման գարտուղի ճանապարհների կղիմեիր նրան նվաստացնելու համար...
- Ուրեմն քո կարծիքով բոլոր մաթեմատիկոսներն ու ֆիզիկոսները գարտուղի ճանապարհներ որոնողներն ու մարդուն նվաստացնողներն են...
- Բնավ, մեծ մաթեմատիկոսները հավասար են մեծ բանաստեղծներին, բանաստեղծներ են նրանք եւ դրանով են մեծ...
- Դուրս մայիր, Եյու Յորքին մայիր, բանաստեղծությամբ այդպիսի բան կկառուցվի՞...
- Հենց միայն բանաստեղծությամբ կկառուցվի...
Ընկեր Օնիկը ինձ նայում է այնպիսի գարնանքով, ինչպես Մայակովսկու բանաստեղծության մեջ այժը՝ աֆիշին...
- Ախր այս ամենը ճշգրիտ հաշվումների, բանաձեւերի, օրենքների վրա են կառուցված...
- Նաեւ բանաստեղծության թռչքները...
- Հավատո՞ւմ ես ասածներիդ...
- Հավատում եմ էյնշտեյնին ու Դատտենկուն... Դատտենկուն ասել է՝ գեղեցկությունը աշխարհը կփրկի, իսկ էյնշտեյնը ասել է, թե հարաբերականության տեսությունը ստեղծելիս ոչ մի գիտական տեսություն իրեն այնքան չի օգնել, որքան Դատտենկուն...
Մեծ մարդկանց մեծ սխալումները...

- Ահա Ամերիկայում, Դատտենկու ասած գեղեցկությունը փրկո՞ւմ է այս աշխարհը...
- Ոչ, որովհետև այստեղ հանուն դուրսի, հանուն իրի ամեն ինչի միջից հանում են պոեզիան եւ տեղը դնում դրանն ու արհեստակարգ ... Խոտի միջից հանում են քնքշանքն ու բուրմունքը, տեղը դնում սինթետիկա, ջրավազանների հատակը կապույտ են ներկում, եւ արցունքի պես մաքուր ջրին տալիս կապույտ կեղծիք... Բոլոր ռեստորաններում, բոլոր բարերում գեղեցիկ կանանց դրամով մերկացնում են, բարձրացնում բեմ եւ նրանց միջից հանում պոեզիան ու կանանցի հավերժ անողորմածը...
- Հա՛, հա՛, հա՛, - լնդերի կարմիրը բացելով հռչակում է ընկեր Օնիկը, - վերջապես հանգար իմ ասածին:
- Ոչ, իմ ասածը բոլորովին ուրիշ է: Պոեզիան եղել է, կա, կլինի, ինչպես արեւը, ջուրը, ծաղիկը, կինը...
- Այս երկրի մեջ այնքան հաճույքներ կան, որ պոեզիան ո՞ւմ է պետք:
- Մարդը շուտով այդ հաճույքներից կծանձրանա ու կզգվի... Արդեն իսկ նկատել էք, որ ծանձրանում է, զգվում ու ձգտում դեպի անտառները, դաշտերը, ծաղիկները, գետերը... Դեպի բնականը, մաքուրը, այսինքն՝ դեպի պոեզիան:
- Իսկ մերկ կի՞նը... Այս սեքսուալ հեղափոխության ճանփան մարդը կարո՞ղ է փակել...
- Կարող է: Դրանից էլ կծանձրանա... Ու կրկին Ռոմեոներ ու Ջուլիետներ կծնվեն:
- Ռոմեոներ ու Ջուլիետներ... Հա՛, հա՛, հա՛... Հավատո՞ւմ ես ասածիդ, ասածիդ հավատո՞ւմ ես...
- Ասածիս հավատում եմ, հավատում եմ ասածիս, - նույն ոճով պատասխանում են ես: - Մանավանդ շատ եմ հավատում բանաստեղծության ուժին...
- Դատա՞րկ, դատա՞րկ խոսքեր...
- Դատարկա՞մի վերջին տարիներին էր կարծես, դու «Կոլտոգ շուկայում» գինու խանութ ունեիր...
- Ի՞նչ անենք, ապրել էր պետք... Մեր կոլտոգի գինին էի ծախում:
- Իմ բանաստեղծությունների առաջին գիրքն էր լույս տեսել, մտանք շնորհավորելու: Մեր մեջ գինու ամենալավ գիտակը Հրաչյա Հովհաննիսյանն էր: Ասացի՞նք՝ փորձիր, տես իսկականն է: Փորձեց, դեմքը ծանաժանեց ու կանացուկ ասաց. «Կեղծ է»:
- Ընկեր Օնիկ, ես քո դեմ քեմ ու վիրավորանք չունեմ: Բայց այն մարդիկ, ովքեր հավատ չունեն, չեն սիրում, ավելին արհամարհում են պոեզիան, ի վերջո դառնում են գինի եւ ամեն ինչ՝ հավատ, ճշմարտություն, սկզբունք կեղծողներ...
Ընկեր Օնիկի դեմքին կարմրադեղնավուն արհամարհանքն անհետացավ ու ի վերջո անհետացավ նաեւ ինքը...

... Ու կրկին Ռոմեոներ ու Ջուլիետներ կծնվեն:
- Ռոմեոներ ու Ջուլիետներ... Հա՛, հա՛, հա՛... Հավատո՞ւմ ես ասածիդ, ասածիդ հավատո՞ւմ ես...
- Ասածիս հավատում եմ, հավատում եմ ասածիս, - նույն ոճով պատասխանում են ես: - Մանավանդ շատ եմ հավատում բանաստեղծության ուժին...
- Դատա՞րկ, դատա՞րկ խոսքեր...
- Դատարկա՞մի վերջին տարիներին էր կարծես, դու «Կոլտոգ շուկայում» գինու խանութ ունեիր...
- Ի՞նչ անենք, ապրել էր պետք... Մեր կոլտոգի գինին էի ծախում:
- Իմ բանաստեղծությունների առաջին գիրքն էր լույս տեսել, մտանք շնորհավորելու: Մեր մեջ գինու ամենալավ գիտակը Հրաչյա Հովհաննիսյանն էր: Ասացի՞նք՝ փորձիր, տես իսկականն է: Փորձեց, դեմքը ծանաժանեց ու կանացուկ ասաց. «Կեղծ է»:
- Ընկեր Օնիկ, ես քո դեմ քեմ ու վիրավորանք չունեմ: Բայց այն մարդիկ, ովքեր հավատ չունեն, չեն սիրում, ավելին արհամարհում են պոեզիան, ի վերջո դառնում են գինի եւ ամեն ինչ՝ հավատ, ճշմարտություն, սկզբունք կեղծողներ...
Ընկեր Օնիկի դեմքին կարմրադեղնավուն արհամարհանքն անհետացավ ու ի վերջո անհետացավ նաեւ ինքը...

... Ու կրկին Ռոմեոներ ու Ջուլիետներ կծնվեն:
- Ռոմեոներ ու Ջուլիետներ... Հա՛, հա՛, հա՛... Հավատո՞ւմ ես ասածիդ, ասածիդ հավատո՞ւմ ես...
- Ասածիս հավատում եմ, հավատում եմ ասածիս, - նույն ոճով պատասխանում են ես: - Մանավանդ շատ եմ հավատում բանաստեղծության ուժին...
- Դատա՞րկ, դատա՞րկ խոսքեր...
- Դատարկա՞մի վերջին տարիներին էր կարծես, դու «Կոլտոգ շուկայում» գինու խանութ ունեիր...
- Ի՞նչ անենք, ապրել էր պետք... Մեր կոլտոգի գինին էի ծախում:
- Իմ բանաստեղծությունների առաջին գիրքն էր լույս տեսել, մտանք շնորհավորելու: Մեր մեջ գինու ամենալավ գիտակը Հրաչյա Հովհաննիսյանն էր: Ասացի՞նք՝ փորձիր, տես իսկականն է: Փորձեց, դեմքը ծանաժանեց ու կանացուկ ասաց. «Կեղծ է»:
- Ընկեր Օնիկ, ես քո դեմ քեմ ու վիրավորանք չունեմ: Բայց այն մարդիկ, ովքեր հավատ չունեն, չեն սիրում, ավելին արհամարհում են պոեզիան, ի վերջո դառնում են գինի եւ ամեն ինչ՝ հավատ, ճշմարտություն, սկզբունք կեղծողներ...
Ընկեր Օնիկի դեմքին կարմրադեղնավուն արհամարհանքն անհետացավ ու ի վերջո անհետացավ նաեւ ինքը...

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌԵ

«Անանկության մասին» ԱՅ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն 2022թ. նոյեմբերի 30-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՄՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից ԱՅ ԸԻ առաջին աստիճանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք՝ հետևյալ լոտերով.
Լոտ 2 - Հարիչ /միքսեր/ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամանով 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 860.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 3 - Կրեմի սրկիչ՝ DE DANIELI RMP83 15 լիտր 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 300.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 4 - Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 800.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 5 - Խմորհարիչ՝ K-M130 130կգ, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ

պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1.000.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 6 - Վառարան՝ Bassanina zoom 1212, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 2.000.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 7 - Դարակաշար ռատաջիոն վառարանի համար՝ 50-70 սմ (18 դարակ), 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 280.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kemplex SF600/1400, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 700.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատաջիոն վառարանի համար՝ 60-80 սմ (18 դարակ) 7 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 72 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ, գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 422.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

տասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 10 - Դարակաշար թիթեղներով ռատաջիոն վառարանի համար՝ 60-80սմ (18 դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ) 108 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1.008.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 11 - Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1.300.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294*204*200սմ չափսի, պատերը ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 900.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Լոտ 13 - Վառարան՝ Bassanina rotor 57 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ, գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 2.000.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գործող գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՄՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՄՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 150.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպոսիտ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպոսիտ՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախաձեռնի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախաձեռնը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600:
Աճուրդին մասնակցելու ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանին (հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33)»:

Ա. Խաչատրյան
Սնանկության գործով
կառավարիչ

ԿՈՐԵԼ Է

Յուրա Յուրիկի Ասլանյանի ԱԱ N 164170 միջնակարգ կրթության ատեստատը՝ տրված Մարտունու շրջանի Սարգսաշենի միջնակարգ դպրոցի կողմից՝ 2017 թվականին:
Համարել անվավեր:
Դավիթ Արմենի Վերդիյանի՝ 9-րդ դասարանի ԱՆ 248392 վկայականը՝ տրված ԱՅ Շոշի Սարգիս Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի կողմից՝ 2019 թվականին:
Համարել անվավեր:
Գեորգի Մանվելի Գարաբյանի՝ ԱՆ 277372 վկայականը՝ տրված ԱՅ Շոշի Սարգիս Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի կողմից՝ 2020 թվականին:
Համարել անվավեր:

Հոնոարար՝
ԽՍԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info
Մեքերունների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 14.11.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: